

*ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ*

ՀԱՅ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱՐԱԳՈՐԾՈՒՄ

*Սոցիոլոգիական հետազոտություն*

*Նախագծի ղեկավար*

սոց. գիտ. դոկ. Գ.Պողոսյան

Կատարողներ՝  
Ս. Մխիթարյան  
Ա. Դարբինյան  
Զ. Օհանջանյան  
Ա. Դավթյան

Երեւան - 2005

Սույն հրատարակության մեջ ամփոփված են հեղինակների տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետների հետ:

## **ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ**

Սույն հետազոտական նախագիծն իրականացվեց մեր գործընկերների եւ խորհրդատուների անգնահատելի օգնության շնորհիվ: Ցանկանում ենք հատուկ երախտագիտություն հայտնել ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի ծրագրի նախկին համակարգող Անժելա Լեֆեյվին և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան քաղաքական հարցերի մասնագետ Անահիտ Մարտիրոսյանին այս նախագծի մտահղացման եւ աջակցության համար: Անչափ շնորհակալ ենք ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի նախկին ղեկավար Էդ Շեքին, նույն բաժնի ծրագրի օգնական Դավիթ Խաչատուրյանին եւ ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման ծրագրի ղեկավար Բլանկա Հանչիլովային՝ աշխատանքի հանդեպ մշտական ուշադրության եւ արժեքավոր խորհուրդների համար: Նաեւ շնորհակալություն ենք հայտնում ՄՍԿ-ի խորհրդատուներ Հրաչյա Կաթոյանին, Շուշանիկ Զաքարյանին եւ Օվսաննա Բաբայանին (2004 թ. ՄՍԿ-ի, ներկայումս՝ ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի աշխատակից) համատեղ աշխատանքի, հատկապես հետազոտական խմբի՝ Հունաստան, Թուրքիա եւ Միացյալ Արաբական Էմիրություններ այցի ընթացքում օժանդակության համար: Մենք շնորհակալ ենք ՀՀ միգրացիայի եւ փախստականների վարչության պետի տեղակալ Լյալյա Ասլանյանից՝ նախագծի մշակման եւ հետազոտության ընթացքում արժեքավոր խորհուրդների համար: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում OHCHR/ ODIHR/ UNICEF հակաթրաֆիկինգի ծրագրի խորհրդատու՝ փորձագետ Բարբարա Լիմանովսկային, որին հրավիրել էր ԵԱՀԿ գրասենյակը, ՀՍԱ-ի հետազոտական խմբի հետ երկօրյա պարապմունքներ անցկացնելու եւ հետազոտության հարցաշարի լրամշակման աշխատանքների համար:

Հատուկ շնորհակալություն ԵԱՀԿ միջազգային խորհրդատուներին՝ զեկույցի վերջնական տեքստի վրա կատարած մեծ աշխատանքի համար: Հատկապես Յենս Մատտեսի ծավալուն եւ արհեստավարժ վերլուծական աշխատանքի համար, որի արդյունքում զեկույցի անգլերեն տարբերակը ընդունեց իր տեսքը՝ կառուցվածքի եւ բովանդակության առումով:

## **ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀՕՍ	Հայ օգնության միություն
ՀՍԱ	Հայկական սոցիոլոգիական ասոցիացիա
ՄՈԶՀ	Մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամ
ԽՀ	Խորացված հարցազրույց
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՍԱՄ	ՍԱՄԱՐԴԱՆ – Սոցիոլոգիական ուսումնասիրությունների կենտրոն, Ստամբուլ
ՄԱԿԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ .....	III
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	IV
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....	V
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	VIII
Հիմնական արդյունքները .....	VIII
<i>Հասարակության իրազեկվածության ուսումնասիրություն</i> .....	VIII
<i>Խորացված հարցազրույցներ ենթադրյալ զոհերի հետ</i> .....	X
<i>Հիմնական նպատակակետ երկրներում ուսումնասիրություն կատարելու         հնարավորությունների հետազոտություն</i> .....	XII
Առաջարկություններ .....	XIII
<b>ՁԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆ Ու ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....</b>	<b>15</b>
<b>ԳԼՈՒԽ 1.    ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>20</b>
1.1 Սեթորաբանություն .....	20
1.1.1. <i>Ուսումնասիրության ուրվագիծ</i> .....	20
1.1.2 <i>Ընտրանքի կառուցվածքը եւ ուսումնասիրված բնակչության նկարագրությունը</i> .....	21
1.2 Հիմնական արդյունքներ .....	25
1.2.1 <i>Իրազեկվածություն միգրացիայի հարցերի վերաբերյալ</i> .....	25
1.2.2 <i>Միգրացիայի արդյունքում շահագործման ենթարկված հարցվողներ</i> .....	28
1.2.3 <i>Միջնորդներ</i> .....	29
1.2.4 <i>Կողմնորոշումներ</i> .....	30
1.2.5 <i>Պաշտպանող կազմակերպություններ</i> .....	30
1.2.6 <i>Տեղեկությունների աղբյուրներ</i> .....	31
1.3 Վերլուծություն եւ եզրակացություններ .....	32

<b>ԳԼՈՒԽ 2. ԽՈՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԶՈՂԵՐԻ ՀԵՏ.....</b>	<b>35</b>
2.1 Մեթոդաբանություն .....	35
2.2 Հիմնական արդյունքներ .....	37
2.2.1 Սեռ եւ տարիք .....	37
2.2.2 Կրթություն եւ զբաղվածության կարգավիճակ .....	37
2.2.3 Անուսնական կարգավիճակ եւ առողջական վիճակ.....	39
2.2.4 Նպատակակետ երկրներ .....	40
2.2.5 Փոխադրումների, մաքսանենգության եւ միգրացիայի եղանակներ.....	41
2.2.6 Միջնորդներ եւ խաբեություն.....	41
2.2.7 Շահագործման եւ բռնության ձեւերը, որոնցից տուժել են հարցվածները.....	43
2.2.8 Ներգրավում կոմերցիոն սեքսի մեջ.....	45
2.2.9 «Թրաֆիկինգ»-ի մասին տեղյակություն.....	45
2.2.10 Վերադարձ տուն .....	45
2.3 Վերլուծություն եւ եզրակացություններ.....	46
<b>ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱԿԵՏ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>49</b>
3.1 Մեթոդաբանություն .....	49
3.2 Հիմնական արդյունքները .....	50
3.2.1 Միացյալ Արաբական Էմիրություններ .....	50
3.2.2 Հունաստան .....	51
3.2.3 Թուրքիա .....	54
3.3 Վերլուծություն եւ եզրակացություններ.....	56
<b>ԳԼՈՒԽ 4. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>	<b>60</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԼՈՒԽ 1-Ի ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ .....</b>	<b>63</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳԼՈՒԽ 2-Ի ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ .....</b>	<b>73</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԳԼՈՒԽ 3-ՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՅՑԵՐԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ .....</b>	<b>80</b>

Միացյալ Արաբական Էմիրություններ .....	80
Հունաստան.....	86
Թուրքիա.....	91

## **ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Սույն ուսումնասիրությունը Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան (ՀՍԱ) իրականացրել է 2004-2005 թվականներին, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական և ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի մասնագետների տեխնիկական օժանդակությամբ: Հետազոտության գլխավոր նպատակն էր պարզել հայ հասարակության տարբեր սոցիալական խմբերի շրջանում թրաֆիկինգի մասին իրազեկվածության մակարդակը, հասկանալ, թե որքանով է այն տարածում գտել Հայաստանում եւ բացահայտել, թե որ սոցիալական խմբերն են այս հարցում առավել խոցելի: Նշված նպատակներն իրագործելու համար ՀՍԱ-ն կատարեց Հայաստանի բոլոր շրջաններից 2500 պատահական ընտրված հարցվածների քանակական ուսումնասիրություն եւ աշխատանքի շահագործման եւ/կամ թրաֆիկինգի ենթադրվող 132 զոհերի որակական ուսումնասիրություն՝ օգտագործելով «ձնագնդի մեթոդը»:

### **Հիմնական արդյունքները**

#### ***Հասարակության իրազեկվածության ուսումնասիրություն***

- Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ հայեր մեկնում են արտասահման աշխատելու եւ նրանք տեղյակ են ապօրինի աշխատանքային միգրացիայի հնարավոր վտանգների մասին: Հարցվածների կեսը եղել է արտասահմանում, մեկ երրորդը ճանաչում է միգրանտների, որոնք արտասահմանում աշխատանք են գտել ապօրինի: 40%-ից ավելին անձամբ ճանաչում է որեւէ մեկին, որը աշխատանքային միգրացիայի հետևանքով ենթարկվել է շահագործման, օրինակ շատ ցածր կամ բոլորովին չի վարձատրվել, արել է գործ, որը տարբերվում է հավաքագրման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունից:
- Հարցվածները համարել են, որ Ռուսաստանն է հանդիսանում աշխատանքային շահագործման ամենամեծ ռիսկի աստիճան ունեցող պետությունը, այնինչ Թուրքիան նրանք համարել են միգրանտների սեռական շահագործման հիմնական երկիրը: Հիմք ունենալով այն



ենթադրությունը, որ աշխատանքային շահագործումը հիմնականում վերաբերում է տղամարդկանց, իսկ սեռական շահագործումը՝ հիմնականում կանանց, Թուրքիան կարելի է համարել իբրև հայ միգրանտ կանանց համար հնարավոր ռիսկային պետություն, իսկ Ռուսաստանը՝ հայ տղամարդկանց:

- Միաժամանակ, մարդիկ ակնհայտորեն անտեղյակ են օրինական միգրացիայի պայմաններին եւ գործառույթներին եւ զարմանալիորեն հակված են դեպի ապօրինի միգրացիան. հարցվածների 90%-ը՝ անկախ տարիքից, սեռից եւ կրթությունից, որեւէ խնդիր չի տեսնում դրա մեջ ընդգրկվելու հարցում:
- Հարցվածների կարծիքով, անհատ միջնորդները, ճանապարհորդական եւ հավաքագրող գործակալությունները են մարդկանց ապօրինի տեղափոխման հիմնական գործակալները: Ավելին, ուսումնասիրության մասնակիցների մոտ 10%-ն անձամբ ճանաչում է ապօրինի միգրացիայի որեւէ միջնորդի եւ հարցվածներից 55-ը օգտվել են նրանց ծառայություններից:
- Հակառակ ապօրինի միգրացիային ներգրավվելու ցանկությանը, մարդիկ զայրույթով են վերաբերվում միջնորդներին (հարցվածների երկու երրորդը) եւ համարում են, որ նրանց գործունեությունը պետք է արգելվի: Այդպես են կարծում հատկապես տարեց մարդիկ, որոնք, ըստ երեւույթին, հանդված են, որ միջնորդների հիմնական թիրախը երիտասարդներն են:
- Հարցվածների միայն մեկ քառորդին էր ծանոթ «թրաֆիկինգ» տերմինը: Ովքեր ծանոթ էին, հիմնականում տեղեկացել էին հեռուստատեսությունից, նրանք կապում են այդ հասկացությունը մարդկանց ապօրինի տեղափոխումների, սեքս բնագավառի մեջ բռնի ներգրավելու եւ շահագործման այլ ձեւերի հետ: Հարցվածների կեսից ավելին միգրացիայի մասին ավելի շատ իմանալու ցանկություն արտահայտեց, ինչը կարելու ցուցանիշ է ապօրինի միգրացիայի եւ թրաֆիկինգի վտանգների մասին իրազեկության մակարդակը բարձրացնելու տեսանկյունից:
- Հաշվի առնելով թրաֆիկինգի մասին տեղեկատվության անբավարար

լինելու հանգամանքը, զարմանալի չէ, որ տասը հարցվածներից միայն մեկն էր տեղյակ թրաֆիկինգի զոհերի իրավունքները պաշտպանող հայաստանյան կազմակերպությունների մասին: Նույնիսկ ավելի քիչ թվով մարդիկ (5%) գիտեին մարմնավաճառության մեջ ներգրավված կանանց իրավունքները պաշտպանող՝ Հայաստանում եւ արտասահմանում գործող կազմակերպությունների մասին: Հարցվածների կողմից հիշատակված 26 տարբեր կազմակերպությունների շարքում ամենից հաճախ հիշատակվել են Կանանց միություն հասարակական կազմակերպությունը եւ Միգրացիայի ու փախստականների պետական վարչությունը:

- 2500 հարցվածներից 48-ը միգրացիայի ժամանակ շահագործվել են եւ այդ դեպքերի որոշ մասը կարելի է համարել թրաֆիկինգ՝ կախված նրանց փոխադրման ճշգրիտ հանգամանքներից, որոնք այս հետազոտության ընթացքում չհաջողվեց հաստատել անհրաժեշտ մանրամասնությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին 12-14 տարիների ընթացքում շուրջ մեկ միլիոն հայ է մեկնել արտասահման՝ աշխատանք որոնելու նպատակով, ապա այս համամասնությունը ենթադրում է, որ շուրջ 20.000 մարդ այդ ժամանակահատվածում հանդիպել են համանման խնդիրների:

### ***Խորացված հարցազրույցներ ենթադրյալ զոհերի հետ***

- Խորացված հարցազրույցների մասնակիցները հիմնականում միջին տարիքի մարդիկ էին, որոնք արտասահմանում աշխատելիս՝ հանդիպել են շահագործման տարբեր դրսևորումների: Բացահայտված զոհերի մեծամասնությունը Երեւան քաղաքից եւ Լոռվա ու Շիրակի մարզերից էին:
- Միացյալ Արաբական Էմիրությունները եւ Թուրքիան գլխավորում են այն երկրների ցուցակը, որտեղ տեղի է ունենում կանանց առևտրային շահագործումը, իսկ Ռուսաստանը գլխավոր երկիրն է աշխատանքային շահագործման տեսակետից, ինչը հաստատում է արմատավորված հասարակական կարծիքը:
- Խորացված հարցազրույցները ցույց են տալիս, որ հարցվածների գրեթե մեկ երրորդը վերը նշված երկրների տարածք մուտք են գործել առանց վավեր մուտքի արտոնագրերի: Հարցվածների գրեթե 10 տոկոսը՝ բոլորը

կանայք, ասացին, որ իրենք վերավաճառվել են:

- Հարցվածների մեծամասնությունը իրենց ուղեւորությունն արտասահման կազմակերպել են ինքնուրույն կամ բարեկամների, ընկերների եւ այդ երկրներում գտնվող համերկրացիների օժանդակությամբ: Մեկ երրորդը ստիպված էր վճարել միջնորդների ծառայությունների համար: Նույնքան հարցվածներ նշեցին, որ իրենց խաբված են համարում միջնորդների կողմից՝ գլխավորապես թյուր տեղեկատվություն ստանալու առումով: Ոմանք հաստատում էին, որ միջնորդները շահագործում էին իրենց իբրեւ բանվորների, առաջարկել են իրենց մեկ այլ, դժվար աշխատանք կամ ներկայացրել են նախատեսվածից ավելի բարձր ճանապարհորդական ծախսերի գումար: Հարցվածների գրեթե կեսը խաբվել են անհատ միջնորդների, մյուսները՝ հավաքագրական, ճանապարհորդական կամ ամուսնական գործակալությունների կողմից:
- Հարցվածների ավելի քան երկու երրորդը ենթարկվել է աշխատանքային շահագործման, 15 տոկոսին հարկադրել են զբաղվել մարմնավաճառությամբ, եւ շուրջ 5 տոկոսը տառապել է ճորտության կամ բռնության այլ ձեւերից: Չվճարվելը կամ թերի վճարվելը ամենից տարածվածն է համարվում, հարցվածների կեսը նաեւ նշել է անմարդկային եւ ստորացուցիչ վերաբերմունքը, եւ մոտավորապես 60 տոկոսը հաստատել է ֆիզիկական կամ հոգեկան վնաս կրելու հանգամանքը: Մասնավորապես, կանայք հայտնում են, որ իրենց տեղաշարժը սահմանափակված է եղել, իսկ անձնագրերը՝ առգրավված:
- Սակայն, հետաքրքրականն այն է, որ հարցվածների գրեթե կեսն ասել է, որ իրենց՝ իբրեւ միգրանտների, իրավունքները ոտնահարված չէին: Ավելին, մի քանիսը նշել են, որ կցանկանային վերադառնալ այն երկրները, որտեղ շահագործման են ենթարկվել՝ նշելով որ իրենց ներկա վիճակն ավելի վատ է, համեմատած արտասահմանում ճաշակած նախկին շահագործման հետ: Եթե առաջին փաստը, խոսում է միգրանտների իրավունքների վերաբերյալ անտեղյակության մասին, ապա երկրորդի համար որեւէ տրամաբանական բացատրության դժվար է գտնել:
- Հարցվածների մեծամասնությունը տուն է վերադարձել առանց որեւէ օժանդակության, եւ միայն մի քանիսն էին տեղեկացված եղել այն ոչ

կառավարական եւ միջազգային կազմակերպությունների մասին, որոնք օժանդակում են զոհերին:

***Հիմնական նպատակակետ երկրներում ուսումնասիրություն կատարելու հնարավորությունների հետազոտություն***

- Հետազոտության հնարավորության ուսումնասիրության զեկույցներ դաշտային այցերի մասին, որոնց ժամանակ գնահատվել են երեք հիմնական նպատակակետ երկրներում՝ Միացյալ Արաբական Էմիրություններում, Թուրքիայում եւ Հունաստանում Հայաստանից ապօրինի միգրանտների՝ իբրեւ թրաֆիկինգի հնարավոր զոհերի մասին ուսումնասիրության հնարավորությունները: Հետազոտության հնարավորության ուսումնասիրությունը երեք հիմնական նպատակակետ երկրներում ցույց տվեց, որ Հայաստանից ապօրինի միգրանտների, այդ թվում թրաֆիկինգի զոհ դարձած կանանց, վիճակը էապես փոխվել է 2001 թվականին ՄՄԿ-ի կողմից պատրաստված վերջին զեկույցից հետո:
- Մարմնավաճառությունը օրինական գործունեություն է Հունաստանում, եւ թրաֆիկինգը լուրջ խնդիր է, քանի որ Մոլդովայից, Ռուսաստանից եւ Բելառուսից այդտեղ են փոխադրվում թրաֆիկինգի զոհերը: Սակայն Հունաստանը հիմնական նպատակակետ երկիր չէ հայերի սեքս-թրաֆիկինգի առումով, թեեւ այստեղ գոյություն ունի մեր քաղաքացիների աշխատանքային շահագործման խնդիր:
- Որոշ պաշտոնյաների կարծիքով, թրաֆիկինգի հայ զոհերի մեծ մասը փոխադրվում են Միացյալ Արաբական Էմիրություններ: Նրանցից շատերը ցանկանում են ուղեւորվել Հունաստան աշխատանք որոնելու նպատակով, սակայն իրականում դա ավարտվում է շահագործմամբ ՍԱԷ-ում: Բազմաթիվ հայ երիտասարդ կանայք մարմնավաճառությամբ են զբաղվում Դուբայի հյուրանոցներում եւ ակումբներում:
- Ի տարբերություն այն փաստի, որը ներկայացնում են հայկական աղբյուրները եւ հասարակության իրազեկվածության ներկա ուսումնասիրությանը, համաձայն որի հենց Թուրքիան է մատնանշվում իբրեւ Հայաստանից թրաֆիկինգի զոհերի հիմնական նպատակակետ, թուրքական աղբյուրները նշում են, որ իրենց երկիր փոխադրվող

թրաֆիկինգի զոհերի թվում հայեր չկան: Այս տարբերությունը կարող է ազդել հետազոտության արդյունքների ճշգրտության վրա եւ բարդացնել դրա իրականացումը: Դժբախտաբար, մենք միայն կարող ենք անուղղակի փաստերի հիման վրա ենթադրություններ անել: Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը դժվարացնում է նման յուրաքանչյուր նախաձեռնություն: Այնտեղ անհրաժեշտ է միջազգային կազմակերպությունների հովանու ներքո եւ տեղական հետազոտական կենտրոնների մասնակցությամբ հատուկ ուսումնասիրություններ անցկացնել՝ փաստարկված եզրակացություններ կատարելու համար:

- Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ երեք երկրների իշխանությունների եւ հայ համայնքների վերաբերմունքը թրաֆիկինգի հանդեպ անհամեմատ ավելի խիստ է դարձել վերջին տարիներին: Հայկական դիվանագիտական առաքելությունները նույնպես ավելի խիստ հսկողություն են սկսել իրականացնել: Արդյունքում, ավելի է դժվարացել թրաֆիկինգի դեպքերի բացահայտումը (նրանք, այսպես ասած, անցել են ավելի խոր «ընդհատակ»), թեեւ, մեր կարծիքով, այդ դեպքերը նաեւ նվազելու միտում ունեն: Վերջապես, թե՛ Հայաստանի, եւ թե՛ արտասահմանյան այդ երկրների իշխանությունները թրաֆիկինգի դեմ ուղղված պայքարում ակնհայտ քայլեր են կատարում: Մինչդեռ հասարակական կարծիքը իներցիայի ուժով շարունակում է շատ մտահոգվածություն ցուցաբերել այս հարցի շուրջ:

### **Առաջարկություններ**

Հետազոտության տվյալների հիման վրա՝ թրաֆիկինգի հետ կապված խնդիրների մասին հասարակության իրազեկվածության բարձրացման եւ նպատակակետ երկրներում միգրանտների իրավունքների ոտնահարմանը բերող ապօրինի միգրացիայի կանխման վերաբերյալ արվում են հետեւյալ առաջարկությունները:

- Անհրաժեշտ է Հանրային հեռուստատեսությամբ (Հ1) եւ հանրային ռադիոյով հատուկ ծրագրեր հեռարձակել՝ ապօրինի միգրացիայի եւ թրաֆիկինգի հարցերը հնչեցնելու, կանխարգելիչ միջոցները քննարկելու եւ այդպիսի իրավիճակներում հայտնված մարդկանց աջակցող

կազմակերպությունների եւ մարմինների մասին լսարանին տեղեկացնելու համար:

- Աշխատանքային միգրացիան ավելի հստակ կանոնակարգման կարիք է զգում, եւ անհրաժեշտ է տեղեկացնել հնարավոր միգրանտներին, թե ինչպես կարելի է գնալ արտասահման եւ աշխատել այնտեղ օրինական ձեւով: Այս իմաստով հարկավոր է մայրաքաղաքում եւ հեռավոր շրջաններում՝ զբաղվածության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող կենտրոնների մի ցանց ստեղծել, որտեղ քաղաքացիները արտասահմանում աշխատանքի հնարավորությունների մասին կարող են անհրաժեշտ պաշտոնական տեղեկություն ստանալ:

## **ՁեԿՈՒՅՑԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Այս հետազոտությունն իրականացրել է Հայկական սոցիոլոգիական ընկերակցությունը՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական եւ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանի գրասենյակի տեխնիկական աջակցությամբ: Հետազոտության գլխավոր նպատակներն են եղել գնահատել թրաֆիկինգի մասին հայ հասարակության տարբեր խմբերի իրազեկության չափը, հասկանալ, թե որքանով է այն տարածված Հայաստանում, եւ պարզել, որ սոցիալական խմբերն են թրաֆիկինգի հնարավոր զոհերը: 2004 թվականի նոյեմբերից ՀՍԱ-ի անդամներն սկսեցին ուսումնասիրել այս նոր երեւույթը՝ օգտագործելով տարբեր միջոցներ:

Դեռեւս 2001 թվականին ՀՍԱ-ն Միգրացիայի միջազգային կազմակերպության ներկայացուցիչների նախաձեռնությամբ հետազոտություն կատարեց, որի նպատակն էր հայտնաբերել Հայաստանից կանանց եւ երեխաների թրաֆիկինգի դեպքերը<sup>1</sup>: Դա մի փոքր որակական ուսումնասիրություն էր, որը վերաբերում էր արտասահմանից վերադարձած 59 կանանց: Ուսումնասիրությունը հաստատեց թրաֆիկինգի, որպես երեւույթի, գոյությունը, սակայն որեւէ ամփոփ տեղեկություն՝ ծավալների կամ այդ խնդրի վերաբերյալ ընդհանուր բնակչության իրազեկվածության աստիճանի մասին չտվեց: Թեպետ հենց այդ ուսումնասիրության շնորհիվ հայ հասարակությունը եւ Հայաստանի կառավարությունը ուշադրություն դարձրեցին խնդրին եւ սկսեցին երեւույթի դեմ պայքարի լուծումներ փնտրել: Երկու տարի անց՝ 2003 թվականին, Հայաստանի կառավարությունը ստեղծեց միջգերատեսչական հանձնաժողով, որը եւ նախաձեռնեց օրենսդրական դաշտի բարելավմանն ուղղված քայլեր, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի մեջ մտավ

---

<sup>1</sup> «Կանանց եւ երեխաների թրաֆիկինգը Հայաստանի Հանրապետությունից» հետազոտություն: ՄՄԿ, սեպտեմբեր 2001թ.:

մարդկանց թրաֆիկինգի կազմակերպման եւ միջնորդության համար ավելի խիստ պատիժ նախատեսող մի հոդված:

Ներկա հետազոտությունը երեք հիմնական նպատակ ունի.

1. Հայաստանում մարդկանց թրաֆիկինգի եւ միգրանտների շահագործման մասին ընդհանուր իմացության եւ իրազեկության վերաբերյալ տեղեկությունների հավաքում եւ վերլուծում:
2. Հայաստան վերադարձած/վերադարձող թրաֆիկինգի զոհերի եւ շահագործման ենթարկված միգրանտների մասին տեղեկությունների հավաքում եւ վերլուծում:
3. Հայաստանից երրորդ երկրներ մեկնած միգրանտների եւ արտասահմանում, մասնավորապես ՄԱԷ-ում, Թուրքիայում եւ Հունաստանում գտնվող հայ ապօրինի միգրանտների վիճակի մասին տեղեկությունների հավաքում եւ վերլուծում:

Նշված նպատակներին հասնելու համար օգտագործվեց երեք միջոց, որոնք նկարագրվում են հետևյալ երեք գլխում.

**Գլուխ 1. Հասարակության իրազեկվածության ուսումնասիրություն:** Ներկայացված են Հայաստանի բոլոր մարզերի չափահաս բնակչության շրջանում (հարցվածների ընդհանուր թիվը՝ 2500 մարդ) սոցիոլոգիական ուսումնասիրության տվյալները, միգրացիայի հանդեպ վերաբերմունքի մասին տեղեկությունները, երեւույթի ծավալների մասին հասարակության իմացության աստիճանը: Նաեւ հստակեցված է թրաֆիկինգի մասին իրազեկվածության եւ ընկալման մակարդակը:

**Գլուխ 2. Խորացված հարցազրույցներ ենթադրյալ զոհերի հետ.** Ներկայացված են միգրացիայի ընթացքում շահագործման ենթարկված եւ/ կամ թրաֆիկինգի զոհ դարձած 132 անձանց հետ անցկացված հավելյալ ուսումնասիրության արդյունքները, որոնք ստացվել են «ձնագնդի» մեթոդի շնորհիվ: Այդ մեթոդը թույլ տվեց 2500 հարցման ենթարկված մարդկանց մեջ բացահայտել 48 ենթադրյալ զոհի, որոնց խնդրեցինք բացահայտել նույնանման փորձ ունեցող այլ մարդկանց:

**Գլուխ 3. Հիմնական նպատակակետ երկրներում ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունների հետազոտություն** զեկույցներ են դաշտային այցերի մասին, որոնց ժամանակ գնահատվել են երեք հիմնական նպատակակետ



երկրներում՝ Միացյալ Արաբական Էմիրություններում, Թուրքիայում եւ Հունաստանում Հայաստանից ապօրինի միգրանտների՝ իբրեւ թրաֆիկինգի հնարավոր զոհերի մասին հետագա ուսումնասիրության հնարավորությունները:

**Եզրափակիչ առաջարկություններն** արվել են տվյալների եւ առաջին, երկրորդ եւ երրորդ գլուխներում արված եզրակացությունների հիման վրա: Յուրաքանչյուր Գլուխ սկսվում է **Սեթողաբանության** ընդհանուր նկարագրով, շարունակվում **Հիմնական Տվյալների** հավաքմամբ եւ ավարտվում հակիրճ **Վերլուծությունով եւ եզրակացություններով**:

Հետազոտության տվյալների հիման վրա թրաֆիկինգի հետ կապված խնդիրների մասին հասարակության իրազեկվածության բարձրացման եւ նպատակակետ երկրներում հաճախ միգրանտների իրավունքների ոտնահարմանը հանգեցնող ապօրինի միգրացիայի կանխման վերաբերյալ արվում են հետեւյալ առաջարկությունները:

**Հավելված 1-ն** ու **Հավելված 2-ը** պարունակում են համապատասխանաբար 1-ին ու 2-րդ գլուխներին վերաբերող աղյուսակներ: **Հավելված 3-ը** ավելի մանրամասնորեն է ներկայացնում Գլուխ 3-ում զետեղված հետազոտության հնարավորության ուսումնասիրության համար կատարված ուղեւորությունների մասին զեկույցները:

ՀԱԱ-ն դաշտային աշխատանքը կատարեց 2004 թվականի դեկտեմբերի 2-ի և 2005 թվականի հունվարի 31-ի միջև ընկած ժամանակահատվածում: Հարցազրույցները կատարվում էին երես առ երես եղանակով, հարցվողների բնակության վայրերում: Ընդհանուր առմամբ, փորձառու եւ լավ պատրաստված վարողները եւ վերահսկող անձանց մի խումբ, անցկացրել են 2500 հարցազրույց: Դաշտային աշխատանքի համար վարձվել են 36 հարցազրույց վարողներ, որոնց աշխատանքի 15%-ի խաչաձեւ ստուգում է իրականացվել: Բոլոր հավաքված հարցաշարերը պահվել են ֆայլում եւ տվյալների վերլուծումից հետո հանձնվել են Երեւանում ԱՄՆ դեսպանատուն:

Թրաֆիկինգի խնդիրը համեմատաբար նոր է Հայաստանում, եւ առկա են այդ երեւույթի բնույթի թյուրըմբռնումներ, մասնավորապես, կապված թրաֆիկինգի եւ մարմնավաճառության երեւույթների նույնացման հետ: Հետեւաբար, ՀԱԱ-ի համար կարեւոր էր, որ հետազոտական նախագծի բոլոր մասնակիցները լիովին հասկանան, թե՛ մարդկանց թրաֆիկինգի սահմանումը համաձայն Պալերմոյի

արձանագրության (տե՛ս ստորեւ ներկայացված ներդիրը), եւ թե՛ իրավապաշտպանական մոտեցումը հակաթրաֆիկինգային աշխատանքին: Այդ նպատակով ՀԱԱ-ն եւ ԵԱՀԿ-ի Երևանի գրասենյակը ԵԱՀԿ միջազգային փորձագետի աջակցությամբ երկօրյա դասընթաց կազմակերպեցին, որի ընթացքում վերանայվեցին եւ քննարկվեցին հետազոտության հետ կապված հիմնական հարցերը: Թեմաները ներառեցին մինչեւ 18 տարեկան երեխաներին վերաբերող թրաֆիկինգի սահմանման հատուկ հայտածներ, զոհերի պաշտպանության այնպիսի հարցեր, ինչպիսիք են զոհերի իրավունքների եւ արժանապատվության պաշտպանության եւ հատուկ վերաբերմունքի իրավունքը, այն սկզբունքը, համաձայն որի ենթադրյալ զոհին պետք է ցուցաբերվի լիակատար պաշտպանություն մինչեւ պարզվի վերջինիս կարգավիճակը եւ այն փաստը, որ յուրաքանչյուր անձ կարող է համարվել թրաֆիկինգի զոհ՝ համաձայն Պալերմոյի արձանագրության սահմանման՝ անկախ այն հանգամանքից, թե վերջինս իրեն նույնացնում է թրաֆիկինգի զոհերի հետ, թե այդպես է ընկալվում ուրիշների (այդ թվում՝ իշխանությունների) կողմից:

**Պալերմոյի արձանագրությունը** (Միջազգային կազմակերպված հանցագործության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիան լրացնող Մարդկանց՝ հատկապես կանանց եւ երեխաների թրաֆիկինգի կանխարգելման, խափանման եւ պատժի վերաբերյալ ՄԱԿ-ի արձանագրություն) ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 2000 թվականի նոյեմբերին: Արձանագրության 3-րդ հոդվածում տրված է «մարդկանց թրաֆիկինգի» հետեւյալ սահմանումը.

( ա ) "Մարդկանց թրաֆիկինգը" նշանակում է շահագործման նպատակով ուժի կիրառման կամ ուժ կիրառելու սպառնալիքի կամ հարկադրման, առեւանգման, խարդախության, խաբեության, իշխանության կամ դիրքի խոցելիության չարաշահման այլ ձեւերի միջոցով, կամ վճարների կամ շահույթների տեսք ունեցող կաշառքի միջոցով այլ անձին վերահսկող անձի համաձայնությունը ձեռք բերել: Շահագործումը ներառում է, ամենից նվազագույնը, այլ մարդկանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձեւերը, ստիպողական աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համարժեք գործելաոճը, ճորտական վիճակը կամ օրգանների հեռացումը:

( բ ) Մարդկանց թրաֆիկինգի զոհի համաձայնությունը ենթադրյալ շահագործման վերաբերյալ, որի մասին նշված է տվյալ հոդվածի ( ա ) ենթապարբերությունում, հաշվի չի առնվում, եթե օգտագործվել է ( ա ) ենթապարբերությունում նշված ազդեցության ցանկացած միջոց:

( գ ) Շահագործման նպատակով երեխայի հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցումը, պարտակումը կամ ստացումը «մարդկանց թրաֆիկինգ» է համարվում, նույնիսկ այն դեպքում, եթե դրանք կապված չեն տվյալ հոդվածի ( ա ) ենթապարբերությունում նշված ազդեցության որեւէ միջոցի հետ:

( դ ) "Երեխա" նշանակում է 18 տարեկանը չլրացած ցանկացած անձ:

(Տես՝ [www.ohchr.org/english/law/protocoltraff.htm](http://www.ohchr.org/english/law/protocoltraff.htm))

Ի լրումն բարոյական նորմերի, որոնք սովորաբար պահպանվում են սոցիոլոգիական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ընթացքում,

հատուկ նախագգուշություն էր ցուցաբերվել թրաֆիկինգի ենթարկված անձանց եւ միգրանտների հանդեպ, որպեսզի չպատճառվի հոգեկան եւ զգացմունքային վնաս, կանխվի զոհի զգացմունքների վերապրումը եւ խայտառակության դրոշմի ամրապնդումը սեփական գիտակցության մեջ, երաշխավորվի գաղտնիությունը, հարգվի արժանապատվությունը: Նշված նախագգուշությունները իրենց արտացոլումը գտան ոչ միայն հարցաշարերի լեզվի, ոճի, այլ նաեւ հարցազրույց վարողների պահվածքի եւ վերաբերմունքի մեջ:

## **ԳԼՈՒԽ 1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **1.1 Մեթոդաբանություն**

#### **1.1.1. Ուսումնասիրության ուրվագիծ**

Սոցիոլոգիական ուսումնասիրությունը կատարելու նպատակով ՀԱԱ-ի մասնագետները նախորդ համանման ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա յուրահատուկ հարցաշար մշակեցին: Դրանցից էին.

- Հայաստանի Հանրապետությունից կանանց եւ երեխաների թրաֆիկինգը. հետազոտություն: ՄՄԿ, սեպտեմբեր, 2001:
- Թրաֆիկինգի զոհերը Բալկաններում. Կանանց եւ երեխաների սեռական շահագործման նպատակով դեպի Բալկանյան տարածաշրջան, տարածաշրջանի միջով եւ տարածաշրջանից թրաֆիկինգի հետազոտություն: ՄՄԿ, 2001:
- Ապօրինի միգրացիան Թուրքիայում. ՄՄԿ, No.12, 2003:
- Ո՞վ է հաջորդ զոհը: Ռումինացի երիտասարդ կանանց խոցելիությունը մարդկանց թրաֆիկինգի առջեւ. ՄՄԿ, 2003:

Սոցիոլոգիական ուսումնասիրություն իրականացնելու մեթոդաբանությունն ու հարցաշարերը ընդունվեցին ԵԱՀԿ մասնագետների հետ քննարկումների արդյունքում, հաշվի առնելով նրանց մեկնաբանությունները եւ առաջարկությունները: Հետազոտության հիմնական նկարագրությունը ներկայացվել է թրաֆիկինգի դեմ պայքարի ՀՀ միջգերատեսչական հանձնաժողովին, ինչպես նաեւ ՄԱԿԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից ստեղծված ոչ կառավարական կազմակերպությունների թրաֆիկինգի հարցերով հատուկ խմբին:

Սոցիոլոգիական հետազոտության համար պատրաստված հարցաշարը նախագծի լայն շրջանակն է արտացոլում եւ բաղկացած է երկու բաժնից: Առաջին՝ հիմնական բաժինը նպատակ ունի պարզելու Հայաստանի ընդհանուր բնակչության իրազեկվածության մակարդակը, երկրորդը՝ հավելյալ հարցերով, նպատակաուղղված է ավելի շատ տեղեկություններ ստանալուն այն

հարցվածներից, որոնց, հարցազրույցի առաջին մասի հիման վրա, վարողները համարել էին աշխատանքի շահագործման եւ/կամ թրաֆիկինգի հնարավոր զոհեր (խորացված հարցազրույցների մեթոդաբանության մանրամասների հետ ծանոթանալու համար տե՛ս Գլուխ 2, 0. Մեթոդաբանություն):

**1.1.2 Ընտրանքի կառուցվածքը եւ ուսումնասիրված բնակչության նկարագրությունը**

Համաձայն 2001 թվականի մարդահամարի, Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը կազմում է 3.002.594<sup>2</sup> մարդ. քաղաքային բնակչությունը՝ 66%, իսկ գյուղականը՝ 34%: Համահանրապետական սոցիոլոգիական ուսումնասիրությունը անցկացվել է բնակչության 15–60 տարիքային խմբում, որը կազմում է 1.999.076 բնակիչ: Ներկայացուցչական սոցիոլոգիական ուսումնասիրություն անցկացնելու նպատակով ՀՍԱ-ն պատահականացված բազմափուլ ընտրանք պլանավորեց՝ հուսալիության 99% մակարդակով եւ սխալի 1% սահմանով ( $\alpha = 0.01$ ): Հաշվարկված ընտրանքի չափը կազմեց 2.500 հարցված:

Համապետական ընտրանքը ներառեց Երեւանը եւ բոլոր 10 մարզերը: 2.500 հարցազրույցները համաչափորեն բաժանվեցին 11 առաջնային ընտրանքային միավորների միջեւ՝ յուրաքանչյուր մարզի բնակչության թվի հիման վրա, ինչպես տրված է *Աղյուսակ 1: Մարզեր, ուր հարցազրույցներ են անցկացվել:*

Այնուհետեւ հանրապետությունը շերտավորվել է ըստ քաղաքային/գյուղական բնակավայրերի: Հանրապետությունում 914 բնակավայր կա, որոնցից 48-ը՝ քաղաքային եւ 867-ը՝ գյուղական:

---

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մարդահամարի արդյունքներ: Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն. Երեւան, 2003, էջ 143:

• Աղյուսակ 1: Մարզեր, ուր հարցազրույցներ են անցկացվել							
Մարզ	Բնակավայրերի քանակը		Ընտրանքի կետերի քանակը		Հարցազրույցների քանակը		Ընդհանուր
	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	
Երեւան	1	0	84	0	908	0	908
Արագածոտն	1	6	2	6	25	80	105
Արարատ	2	10	4	10	61	149	210
Արմավիր	2	10	5	10	75	138	213
Գեղարքունիք	2	9	4	9	58	122	180
Լոռի	3	6	8	6	123	87	210
Կոտայք	2	7	7	7	108	92	200
Շիրակ	2	6	9	6	135	80	215
Սյունիք	2	3	5	3	73	39	112
Վայոց Ձոր	1	2	1	2	15	30	45
Տավուշ	2	5	2	5	38	64	102
<b>Ընդհանուր</b>	<b>20</b>	<b>64</b>	<b>131</b>	<b>64</b>	<b>1619</b>	<b>881</b>	<b>2500</b>

Հարցազրույցներն անցկացվել են ընդհանուր առմամբ 195 ընտրանքային կետում, 84 բնակավայրում (20-ը՝ քաղաքային եւ 64-ը՝ գյուղական)՝ համաչափության սկզբունքով ՀՀ բոլոր 11 մարզերում: Յուրաքանչյուր մարզում ընտրանքային կետերը ընտրված էին պատահական սկզբունքով՝ նկատի ունենալով տվյալ մարզի մեծությունը: Յուրաքանչյուր մարզում ընտրվել են տարբեր՝ մեծ ու միջին, քաղաքային եւ գյուղական բնակավայրեր:

Հարցազրույցներն անցկացվում էին երես առ երես հարցվողների տնային, ընտանեկան պայմաններում: Յուրաքանչյուր տան միայն մեկ անդամն էր հարցազրույց տալիս՝ կիրառելով համապատասխանաբար «Քիշ»-ի մեխանիզմը (ամենամոտիկ ծննդյան օր), որը ապահովում է ընտրության հավասար հավանականությունը:

Յուրաքանչյուր բնակավայրում հարցազրույց վարողները աշխատում էին՝ կիրառելով ուղղության ընտրության մեթոդը՝ ըստ համաձայնեցրած մեկնարկային կետերի. գյուղերում մեկ կետից, իսկ քաղաքներում 1-84 կետերից (կախված քաղաքի մեծությունից): Մեկնարկային կետերը գյուղերում վարչական շենքերն էին, դպրոցները, շտապ օգնության ցուցաբերման վայրը կամ ավտոբուսի կանգառները: Քաղաքներում մեկնարկային կետերն էին հրապարակները, վարչական շենքերը, կինոթատրոնները եւ հուշարձանները:

Մեկնարկային կետից հարցազրույց վարողը ուղեւորվում էր դեպի մոտակա փողոց

(կամ շարժվում էր «աստղի» սկզբունքով, եթե մեկնարկային կետը հրապարակ էր):

ՏՆերի ընտրությունը կատարվում էր հետեւյալ կերպ. շարժվելով փողոցով վեր կամ վար, հարցազրույց վարողը հերթականորեն ընտրում էր տները փողոցի աջ եւ ձախ կողմերում՝ փոխելով շենքերի հարկերը:

Յուրաքանչյուր տնից պատահական եղանակով ընտրվում էր միայն մեկ հարցվող: Կազմվում էր ընտանիքի/տան բոլոր չափահաս անդամների ցուցակ՝ ըստ նրանց ծննդյան օրերի, եւ այն անձը, որի ծննդյան օրը հաջորդն էր, դառնում էր հարցվողը: Եթե ընտրված հարցվողը բացակայում էր, ապա հարցազրույց վարողներից պահանջվում էր կատարել երկու ետայց՝ օրվա տարբեր ժամերին եւ շաբաթվա տարբեր օրերին, որպեսզի ավարտի հարցազրույցը ընտրված հարցվողի հետ:

Եթե հարցվողը տանը չէր լինում հարցազրույց վարողի երրորդ այցի ժամանակ (երկրորդ ետայց), ապա նա դաշտային վերահսկողի կողմից ստանում էր համապատասխան հրահանգներ: Այդ հրահանգները չէին տրվում մինչ ետայցի գործողությունների սպառումը: Հարցազրույց վարողները ոչ մի դեպքում չէին կարող փոխել հարցվողին միեւնույն տան/ընտանիքի որեւէ այլ անդամի հետ: Եթե ընտրված հարցվողը հրաժարվում էր հարցազրույց տալ, վարողը գնում էր տվյալ ճանապարհի հաջորդ տունը:

Դաշտային հսկիչը հետևում էր հարցազրույց վարողներին՝ պատահական սկզբունքով ստուգելով հարցվածների հասցեները եւ հեռախոսահամարները, որոնք նշվում էին հարցազրույցի ավարտից հետո՝ հարցվածի համաձայնությամբ: Յուրաքանչյուր հարցազրույց վարող օրական ամենաշատը հինգ հարցազրույց էր անցկացնում:


2500 հարցվածների կազմն ըստ սեռի հետեւյալն էր. 47.3%-ը տղամարդիկ էին եւ 52.7%-ը կանայք: 5.1%-ն ուներ տարրական, 69.1%՝ միջնակարգ եւ 25.9%-ը բարձրագույն կրթություն կամ ավարտել էր ասպիրանտուրան:

**• Աղյուսակ 2: Հարցվածների տարիքը**

Տարիք	%
15-17 տարեկան	6.4%
18-20 տարեկան	7.7%
21-25 տարեկան	14.3%
26-30 տարեկան	16.2%
31 տարեկան եւ ավելին	55.4%
	<b>100.00%</b>

Հարցվածների մեծամասնությունը ծնվել է Հայաստանում, եւ միայն 5%-ից քիչ հարցվածներն էին, որ ծնվել էին Վրաստանում, Ադրբեջանում, Իրանում, Ռուսաստանում եւ այլ երկրներում (Տե՛ս Հավելված 1, Աղյուսակ 6: Ծագման վայրը):

**• Նկար 1. Զբաղվածության կարգավիճակ**



Հարցվածների 37.1%-ը աշխատում էին, 22.4% չէին աշխատում, 11%-ը ուսանողներ էին, 20%-ը՝ տնային տնտեսուհիներ 9.5%-ը՝ թոշակառուներ: (Տե՛ս Հավելված 1, Աղյուսակ 7: Ներկայիս զբաղմունքը եւ Նկար 1. Զբաղվածության կարգավիճակ): Հարցվածներից երեք կին պատասխանել են, որ ներգրավված են եղել սեքս ինդուստրիայի մեջ:

Ամուսնական կարգավիճակը հետեւյալն էր. մեծամասնությունը ամուսնացած էր (62.8%), 28%-ը՝ չամուսնացած, 4.4%-ը բաժանված էր եւ 4.8%-ը՝ այրի (Տե՛ս Հավելված 1, Աղյուսակ 8: Ամուսնական կարգավիճակ):



Միջին ընտանիքի եկամուտը հետազոտված բնակչության շրջանում շատ ցածր էր. 10.7%-ի ամսական եկամուտը 10 000 դրամից պակաս էր, 47.6%-ի եկամուտը 10 000-50 000 դրամ էր, 26.4%-ինը 50 000-150 000 դրամ էր, եւ հարցվածների 1.8%-ը վաստակում էր 150 000 եւ ավելին: (Տե՛ս Հավելված 1, Աղյուսակ 9: *Միջին ամսական ընտանեկան եկամուտ*): Հարցվածների 58.3%-ն ունեին 50 000 դրամը (100 ԱՄՆ դոլար) չգերազանցող միջին ընտանեկան եկամուտ: Իհարկե, աղքատության նվազագույն շեմից ցածր մակարդակի վրա գտնվող ընտանիքներ կային, որոնց կարելի է դասել ռիսկի խմբում:

## 1.2 Հիմնական արդյունքներ

### 1.2.1 Իրազեկվածություն միգրացիայի հարցերի վերաբերյալ

Հարցվածների 41.7%-ը եղել է արտասահմանում (Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 10: *Հարցվածներ, ովքեր եղել են արտասահմանում*): Նրանց մեծամասնությունն արտասահման այցելել է իբրեւ զբոսաշրջիկ (42.1%), աշխատանք փնտրելու (34.3%) կամ բիզնեսի նպատակով (16.3%) (Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 11: *Արտասահման մեկնելու նպատակը*):


Հարցվածների երկու երրորդը (71.1%) չգիտեր, որ ներկայումս Եվրոպայում, Ռուսաստանում կամ Միջին Արեւելքում աշխատանք փնտրելու համար համապատասխան պետությունների իշխանություններից պաշտոնական փաստաթղթեր/ թույլտվություններ են պահանջվում (Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 12: *Վերաբերմունքը Եվրոպայում, Ռուսաստանում եւ Մերձավոր Արեւելքի երկրներում աշխատելու նպատակով ՀՀ քաղաքացիների համար պաշտոնական թույլտվության նկատմամբ*): Այս տեղեկությունը, որն ստացվում է տարատեսակ աղբյուրներից, հուշում է, որ թեւ այդպիսի փաստաթղթերն ու թույլտվությունները պահանջվում են, կարելի է աշխատանք գտնել առանց դրանց: Միայն 44.4%-ը նրանցից, ովքեր եղել են արտասահմանում, տեղյակ էին, որ աշխատանք ստանալու համար թույլտվություն է հարկավոր: Ավելին, հարցվածների միայն 18.1%-ն էր տեղյակ աշխատանքային արտոնագիր ստանալու ընթացակարգից (Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 13: *Տեղեկացվածություն աշխատանքային արտոնագիր ստանալու համար անհրաժեշտ պահանջների վերաբերյալ*) եւ նախկինում աշխատանք որոնելու նպատակով արտասահման մեկնածների ընդամենը 45%-ը գիտեր

վերոնշյալ ընթացակարգի մասին:

2002 թվականի փետրվարին ՄՄԿ-ի համար ՀՍԱ-ի կողմից կատարված «Բնակչության տեղեկացվածությունը միգրացիայի հետ կապված հարցերի մասին» սոցիոլոգիական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բնակչության 37.3%-ն անտեղյակ էր, որ ՀՀ քաղաքացին չի կարող մեկնել որեւէ Եվրոպական երկիր առանց մուտքի արտոնագրի: Ստահոգիչ է, որ ներկա հետազոտության հարցվածների միայն 10%-ն է մտածում, որ արտասահման պետք է այցելեն միայն օրինական ձեւով՝ ունենալով պաշտոնական փաստաթղթեր: Մնացածները կարծում են, որ բոլոր ձեւերն էլ հնարավոր եւ ընդունելի են, այդ թվում՝ ապօրինի **(Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 14: Արտասահման մեկնելու ուղիները)**: Հարցվածները՝ անկախ տարիքից, սեռից, կրթությունից նույն կարծիքն են արտահայտել:


Հարցվածների մեկ երրորդը (34.2%) ճանաչում է միգրանտների, որոնք ապօրինի եղանակով աշխատանք են գտել արտասահմանում **(Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 15: Տեղյակություն արտասահմանում աշխատած որեւէ անձի մասին)**: Միեւնույն ժամանակ, նրանք լավ տեղյակ են, որ ապօրինի միգրանտները ստիպված են լինում արտաժամյա աշխատել (24.9%), ցածր են վարձատրվում (38%), շահագործվում են գործատուների կողմից (17.1%), նրանց տեղաշարժը սահմանափակ է (21.1%), կամ նույնիսկ նրանց անձնագրերը առգրավվում են (9.2%) **(Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 16: Արտասահմանում աշխատող անձանց առջեւ ծառայած խնդիրների տեսակները)**: Նրանք, ովքեր արտասահման են մեկնել եւ աշխատանք գտել ապօրինի եղանակով, գտնվում են ռիսկի խմբի մեջ, եւ մեծ հավանականություն կա, որ կարող են աշխատանքային թրաֆիկինգի զոհ դառնալ:

Այն հարցին, թե որոնք են հայերի համար շահագործված լինելու առումով ամենառիսկային երկրները, հարցվածները նշել են 30 երկիր, ամենից հաճախ՝ Ռուսաստան, Թուրքիա, ԱՄՆ, Գերմանիա, Լեհաստան եւ Հունաստան **(Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 17: Երկրներ, ուր հիմնականում տեղի է ունենում միգրանտների շահագործում)** եւ *Նկար 2. Երկրներ, որոնք նույնացվում են աշխատանքային շահագործման ամենաբարձր ռիսկի հետ*):



Հարցվածների մեծամասնությունը տեղյակ էր, որ որոշ հայ միգրանտներ ներգրավված են սեքս ինդուստրիայի մեջ (61.8%) **(Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 18: Տեղյակություն ՀՀ անհատ քաղաքացիների վերաբերյալ, ովքեր զաղթել են Հայաստանից եւ ստիպված են աշխատել սեքս ինդուստրիայում):**

Պետությունների ցանկը փոխվում է, երբ հարցնում ենք սեքս ինդուստրիա ներգրավված միգրանտների համար հիմնական նպատակակետ երկրների մասին: Այստեղ 24 երկրներից ամենահաճախ նշվում են Թուրքիան, Սիացյալ Արաբական Էմիրությունները, Ռուսաստանը, Իրանը եւ Սիրիան **(Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 19: Երկրներ, ուր հիմնականում սեքս ինդուստրիայում աշխատելու նպատակով արտագաղթ է տեղի ունենում):**



Հարցվածների զգալի մասն (40.9%) անձամբ ճանաչում էր մարդկանց, որոնք ստիպված են եղել առանց աշխատավարձի աշխատել, կամ որոնց անձնագրերը առգրավված են եղել, կամ որոնք վարձատրվում էին սոսկ այնքան, որ ծածկվեր ճանապարհածախսը: Հարցվածների կեսն անձամբ տեղյակ էր այն դեպքերի մասին, երբ արտասահմանում աշխատած մարդիկ ետ են վերադարձել առանց դրամի, որովհետեւ գործատուն իրենց ոչինչ չի վճարել, կամ շատ քիչ է վճարել (50%), կամ նրանք հրավիրված են եղել կոնկրետ աշխատանքի, բայց ժամանելուց հետո պարզվել է, որ դա բացարձակապես այլ աշխատանք է (47%) (Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 20: Տեղյակություն աշխատանքային շահագործման իրավիճակներում հայտնված որեւէ մեկի մասին):

**1.2.2 Միգրացիայի արդյունքում շահագործման ենթարկված հարցվողներ**

Ուսումնասիրության 2500 մասնակիցներից 48-ը (1.9%) նշել են, որ միգրացիայի արդյունքում հայտնվել են շահագործման իրավիճակում (Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 21: Հարցվածներ, ովքեր միգրացիայի արդյունքում տուժել են շահագործումից):

Բոլոր այս դեպքերը տեղի են ունեցել 1991-2004 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, որոնցից մեկ երրորդը (16 դեպք)՝ 2001-2004 թվականներին: Որպես նպատակակետ նշված են հետեւյալ երկրները՝ Ռուսաստան

(23 հարցված), Թուրքիա (4 հարցված), Իրան եւ Ուկրաինա (երկուական հարցված), Գերմանիա, Չուենաստան եւ Լեհաստան (մեկական հարցվածներ): 48 նշված հարցվածները Հայաստանի տարբեր մարզերից էին՝ Երեւանից, Շիրակից, Կոտայքից եւ Գեղարքունիքից (մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս Չավելված 1, *Աղյուսակ 35: Միգրացիայի արդյունքում իրենց շահագործման ենթարկված համարող հարցվածների բնակության վայրեր*):

Հարցվածներից 33-ը հայտնեցին, որ ենթարկվել են աշխատանքային շահագործման, չորսը՝ որ իրենց բռնի կերպով ներգրավել են մարմնավաճառության, երեքը ասացին, որ ենթարկվել են բռնության կամ ստրկացման այլ տեսակների (**Տե՛ս Չավելված 1 Աղյուսակ 21. Հարցվածներ, որոնք միգրացիայի արդյունքում տուժել են շահագործումից**): Նրանցից 23-ը աշխատավարձ չի ստացել: Հարցվածներից մեկի անձնագիրն առգրավվել է: Արտասահման մեկնելուց առաջ երեքին խոստացվել է մի բնույթի աշխատանք, սակայն տվյալ երկիր հասնելուն պես, նրանց ստիպել են կատարել բացարձակապես այլ կարգի աշխատանք (**Տե՛ս Չավելված 1 Աղյուսակ 22. Միգրացիայի արդյունքում շահագործման ենթարկվածների մասին մանրամասնություններ**): Նրանցից 11-ը տուն են վերադարձել առանց դրամի, քանի որ գործատուները հրաժարվել են վճարել:

### 1.2.3 Միջնորդներ

Մարդկանց փոխադրումն արտասահման հաճախ կազմակերպվում է մասնավոր գործակալների կամ կազմակերպությունների կողմից: Ըստ հարցվածների՝ հիմնականում անհատ գործակալները (23.3%), ճանապարհորդական (20%) եւ հավաքագրող գործակալություններն (15.8%) են զբաղվում մարդկանց ապօրինի փոխադրմամբ, այնուհետեւ ցանկը շարունակում են բարեկամները, ծանոթները եւ ընկերները (12%) եւ մարդիկ, որոնք արդեն աշխատում են արտասահմանում (9.8%) (*Մանրամասների համար Տե՛ս Չավելված 1 Աղյուսակ 23. Երկրից ապօրինի գաղթելուն օժանդակող միջնորդները*):

Հարցվածներից 261-ը (10,4%) նշեցին, որ անձամբ ճանաչում են միջնորդների (**Տե՛ս Չավելված 1 Աղյուսակ 24. Անձնական տեղյակություն միջնորդների մասին**), իսկ 55-ը օգտվել են նրանց ծառայություններից (**Տե՛ս Չավելված 1 Աղյուսակ 25.**

Միջնորդների ծառայություններից օգտվելը), անկախ տարիքային խմբերից, սեռից եւ կրթության մակարդակից: Նրանք, ովքեր եղել էին արտասահմանում, ավելի հաճախ գիտեին միջնորդներին (18,3%), քան նրանք, ովքեր արտասահմանում չէին եղել (4,8%): Ավելին, միջնորդներին ճանաչողների եւ արտասահմանում եղածների 25,1%-ը փաստորեն օգտվել է նրանց ծառայություններից:

#### 1.2.4 Կողմնորոշումներ

Հայաստանից ապօրինի միգրացիա կազմակերպող միջնորդների հանդեպ վերաբերմունքն ընդհանուր առմամբ բացասական է: Հարցվածների 73,5%-ը կարծում է, որ միջնորդների ապօրինի գործունեությունը պետք է արգելվի (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 26. Վերաբերմունքը Հայաստանից ապօրինի միգրացիա կազմակերպող միջնորդների (կազմակերպություններ եւ անհատներ) նկատմամբ**): Կանայք նրանց վերաբերվում են քիչ ավելի բացասաբար (75,6%) քան տղամարդիկ (71,2%), իսկ ավելի մեծահասակները միջնորդներին վերաբերվում են ավելի բացասաբար (77,2%), քան 15-17 տարիքային խմբի երիտասարդները (64,8%):

Հետաքրքիր է, որ կանայք, ովքեր Հայաստան են վերադառնում արտասահմանից, որտեղ ներգրավված են եղել այսպես կոչված «սեքս ինդուստրիայի» ոլորտում, արժանանում են միջնորդների նկատմամբ դրսեւորվող գրեթե նույն բացասական վերաբերմունքի. հարցվածների 68,5%-ը հենց այդ կանանց է մեղադրում այդպիսի ճակատագրի համար (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 27. Վերաբերմունքը սեքս ինդուստրիայում աշխատած և Հայաստան վերադարձած կանանց նկատմամբ**): Վերջիններիս նկատմամբ վերաբերմունքը քիչ պակաս բացասական է բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների շրջանում (62,7%), համեմատած միջնակարգ կրթություն ունեցող հարցվածների հետ (70,2%), ինչպես նաեւ կանանց շրջանում (66,7%), տղամարդկանց համեմատությամբ (70,4%):

#### 1.2.5 Պաշտպանող կազմակերպություններ

Հարցվածների շատ քիչ տոկոսն (10%) էր տեղյակ Հայաստանում գործող թրաֆիկինգի գոհերի իրավունքները պաշտպանող կազմակերպություններից (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 28. Տեղյակություն Հայաստանում գործող որեւէ**

կազմակերպության (կառավարական կամ ոչ կառավարական) մասին, որը պաշտպանում է մարդու հիմնական իրավունքները): Էլ ավելի քիչ թվով մարդիկ (5,5%) գիտեին, որ Հայաստանում եւ արտասահմանում գոյություն ունեն մարմնավաճառության մեջ ներգրավված կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ: Հարցվածները նման 26 կազմակերպություն նշեցին: Առավել հաճախ հիշատակվում են «Կանանց միություն» ոչ կառավարական կազմակերպությունը (13,5%), Միգրացիայի եւ փախստականների պետական վարչությունը (12,5%), Հայաստանի Հանրապետության դեսպանությունները (7,0%), ոստիկանությունը (6,3%) եւ իրավապաշտպան կազմակերպությունները (6,3%) (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 29. Մարդու իրավունքները պաշտպանող հայտնի կազմակերպություններ**):

Եթե դասակարգենք նշված 26 կազմակերպությունները, ապա կունենանք հետեւյալ պատկերը. պետական մարմինները (42,1%) եւ ոչ կառավարական կազմակերպությունները հիշատակվում են բոլորից հաճախ (32,5%), այնուհետեւ՝ ՄԱԿ-ը եւ միջազգային կազմակերպությունները (13,7%), քաղաքական կուսակցությունները (4,4%), ՀՀ օմբուդսմենի գրասենյակը (2,6%) եւ եկեղեցին (0,9%).

### **1.2.6 Տեղեկությունների աղբյուրներ**

«Թրաֆիկինգ» տերմինը ծանոթ էր հարցվածների մոտ մեկ քառորդին (23,3%) (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 30. Ծանոթություն «թրաֆիկինգ» տերմինին**): Նրանց մեծամասնությունը տերմինը լսել է հեռուստատեսությունից (74,9%) կամ կարդացել թերթերում (20,4%) (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 31. «Թրաֆիկինգ» տերմինի իմացության աղբյուրը**):

Հարցվածների պատկերացմամբ «թրաֆիկինգ» տերմինը կապված է մարդկանց ապօրինի փոխադրման (61,2%), սեքս ինդուստրիայի ոլորտ բռնի ներգրավման (44,5%) կամ մարդկանց շահագործման այլ ձեւերի հետ (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 32. «Թրաֆիկինգ»-ի սահմանումը**):

Հարցվածների մեծամասնությունը (56,1%) միգրացիայի գործընթացների մասին ավելի շատ տեղեկություններ ստանալու ցանկություն է հայտնել (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 33. Աշխատանքային միգրացիայի կամ միգրացիայի այլ ձեւերի մասին**

ավելի շատ տեղեկություն ստանալու ցանկություն՝ հատուկ հետաքրքրություն ցուցաբերելով արտասահմանում աշխատանքի (67,3%), մուտքի արտոնագիր ստանալու (38,2%), ապրելու (36,2%), վերադառնալու պայմանների (18,4%), եւ սահմաններն անցնելու հարցերի նկատմամբ (14,0%) (**Տե՛ս Հավելված 1 Աղյուսակ 34. Միգրացիայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկության տեսակներ**):

### 1.3 Վերլուծություն եւ եզրակացություններ

Հետազոտությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ հայեր ծանոթ են արտասահման մեկնելու եւ այնտեղ աշխատելու պայմաններին եւ տեղյակ են ապօրինի աշխատանքային միգրացիայի հնարավոր վտանգների մասին: Հարցվածների կեսը եղել է արտասահմանում, մեկ երրորդը ճանաչում է միգրանտների, որոնք ապօրինի աշխատանք են գտել արտասահմանում, 40 տոկոսից ավելին անձամբ գիտեր մարդու, որն աշխատանքային միգրացիայի համատեքստում որեւէ կերպ ենթարկվել է շահագործման, լինի քիչ վարձատրումը, թե ընդհանրապես աշխատավարձի բացակայությունը, կամ այլ աշխատանքի կատարումը, որը տարբերվում է նախատեսվածից:

Հարցվածների պատկերացմամբ աշխատանքային շահագործման առումով Ռուսաստանն ամենամեծ վտանգն էր ներկայացնում, մինչդեռ Թուրքիան առեւտրային սեքսի առումով էր համարվում հիմնական նպատակակետ երկիր: Հիմնվելով այն ենթադրության վրա, որ աշխատանքային շահագործումը գլխավորապես վերաբերում է տղամարդկանց, իսկ շահադիտական նպատակով սեռական շահագործումը՝ կանանց, Թուրքիան կարելի է հնարավոր ռիսկային երկիր համարել հայ միգրանտ կանանց, իսկ Ռուսաստանը՝ հայ միգրանտ տղամարդկանց համար:

Միեւնույն ժամանակ զարմացնում է մարդկանց անտեղյակությունն օրինական միգրացիայի պայմանների եւ ընթացակարգի վերաբերյալ, ինչպես նաեւ ապօրինի միգրացիայի մեջ ընդգրկվելու նրանց ձգտումը: Հարցվածների 90%-ն ապօրինի միգրացիայի մեջ ներգրավվելու հարցում, ըստ երեւույթին, որեւէ խնդիր չի տեսնում՝ անկախ տարիքից, սեռից եւ կրթական մակարդակից: Եւ ավելի քան 10%-ն անձամբ ճանաչում էր որեւէ մեկին, որն ապօրինի միգրացիայի միջնորդությամբ էր զբաղվում: Այդ տոկոսը փոքր-ինչ գերազանցում էր շահագործման զոհերին



օգնություն ցուցաբերող կազմակերպությունների մասին տեղյակ մարդկանց ցուցանիշը:

Այնուամենայնիվ, հակառակ ապօրինի միգրացիայի մեջ ներգրավվելու ցանկության՝ հարցվածների երկու երրորդի վերաբերմունքը խիստ բացասական է հենց միջնորդների նկատմամբ, եւ նրանց գործունեությունն արգելելու միտքը պաշտպանվեց հատկապես ավելի մեծ տարիք ունեցողների կողմից, որոնք, ըստ երեւույթին, կարծում են, որ միջնորդների գործունեությունը հատուկ նպատակաուղղված է երիտասարդ սերնդին: Մյուս կողմից, տվյալները նաեւ ցույց են տալիս, որ 15-17 տարեկան երիտասարդների մեկ երրորդից ավելին միջնորդների եւ նրանց գործունեության հետ կապված ոչ մի խնդիր չեն տեսնում: Նաեւ, հարցվածներին քաջ հայտնի է, որ սեքս ինդուստրիայում որոշ քանակությամբ հայ կանայք են աշխատում, բայց այդ մարդկանց մեծամասնությունը նրանց զոհ չի համարում:

Միայն մեկ քառորդին էր ծանոթ «թրաֆիկինգ» տերմինը: Նրանք, ում հայտնի էր, հիմնականում դրա մասին հեռուստատեսությամբ են իմացել, եւ նրանց ընդհանուր պատկերացմամբ՝ տերմինը կապված էր մարդկանց ապօրինի փոխադրման, սեքս ինդուստրիայի մեջ բռնի ներգրավման եւ շահագործման այլ ձեւերի հետ: Կեսից ավելին միգրացիայի մասին ավելի շատ իմանալու ցանկություն հայտնեց, ինչը լավ ցուցանիշ է:

Ապօրինի շահագործումն արտասահմանում ավելի շուտ նման է նորմի, քան բացառության: Թվում է, թե մարդկանց դուր չեն գալիս այն պայմանները, որոնց հիման վրա կատարվում է միգրացիան, սակայն նրանք սովորեցին համակերպվել դրա հետ: Մարդիկ պատրաստ են արտասահմանում ապրել եւ աշխատել այն բնագավառում, ուր օրենքը չի գործում, եւ շահագործման եւ թրաֆիկինգի զոհ են դառնում:

2500 հարցվածից 48-ը միգրացիայի ընթացքում շահագործման իրավիճակներում են հայտնվել, որից որոշ մասը հնարավոր է իբրեւ թրաֆիկինգ որակել՝ կախված նրանց փոխադրման կոնկրետ հանգամանքներից, որոնք տվյալ հետազոտությունն

անհրաժեշտ մանրամասնությամբ չէր կարող բացահայտել: Եթե պատկերացնենք ամբողջ բնակչության ծավալով (մոտ 2 միլիոն մարդ), 1.9%-ի համամասնությունը 38,000 մարդ է կազմում: Հիմք ունենալով վերջին 12-14 տարիների ժամանակահատվածում<sup>3</sup>, աշխատանք փնտրելու նպատակով արտասահման մեկնած հայերի մեկ միլիոն թիվը՝ արտասահմանում աշխատած հարցվածների ընդհանուր քանակի եւ հայտնաբերված 48 զոհերի թվի հարաբերակցությունից կարելի է հաշվարկել այս համամասնությունը: Հաշվի առնելով հետազոտության արդյունքները (ՏԵՆ **Հավելված 1**, Աղյուսակ 11), 2500 հարցվածներից 358-ն աշխատելու մտադրությամբ են եղել արտասահմանում: Նրանցից 48-ը շահագործման են ենթարկվել, որը կազմում է 13%: Սա նշանակում է, որ վերջին 10-15 տարիներին մեկ միլիոն հայ միգրանտներից մոտ 130.000 ինչպես արդեն Հայաստան վերադարձած, այնպես էլ դեռևս արտասահմանում գտնվողներ, կարող են հանդիպած լինել խնդիրներին: Սա շատ պատկառելի քանակ է, ինչի վրա ուշադրություն պետք է դարձվի թե՛ հասարակության, եւ թե՛ ՀՀ Կառավարության կողմից:

---

<sup>3</sup> Գ. Պողոսյան: «Միգրացիոն գործընթացները Հայաստանում»: Երկրորդ հրատարակություն. Երեւան, 2003 թ:

## **ԳԼՈՒԽ 2. ԽՈՐԱԾՎԱԾ ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑՆԵՐ ԵՆԹԱԴՐՅԱԼ ՋՈՂԵՐԻ ՀԵՏ**

### **2.1 Մեթոդաբանություն**

Շահագործման ենթարկված հայ միգրանտների կամ թրաֆիկինգի զոհերի վիճակը ավելի լավ հասկանալու նպատակով ՀՍԱ-ն 132 շահագործման կամ թրաֆիկինգի ենթադրյալ զոհերի հետ խորացված հարցազրույցներ անցկացրեց, որոնց նպատակը թրաֆիկինգի զոհերի մասին տեղեկությունների հավաքումն էր: Սակայն հարցաշարը պատրաստելիս՝ ՀՍԱ-ն պատկերացում էր թրաֆիկինգի զոհերի հետ հանդիպելու փորձերի ընթացքում հարցազրույց վարողների հավանական դժվարությունները: Միաժամանակ գիտակցում էինք, որ դժվար է լինելու հասնել նախագծի գլխավոր նպատակին, այն է՝ դեպի Հայաստան եւ Հայաստանից մարդկանց թրաֆիկինգի ծավալների եւ տարածվածության մասին հնարավորինս շատ նյութ հայտնաբերելուն: Հնարավոր էր, որ թրաֆիկինգի զոհերի հետ անմիջական կապերի հաստատումն ու նախագծի համար պահանջվող ծավալով հարցազրույցների անցկացումը գրեթե անհնար լիներ: Ուսումնասիրությանը մասնակցելու ցանկություն ունեցող զոհերին հասնելու առումով գոյություն ունեին երկու տեսակի խնդիրներ: Առաջինն այն էր, որ թրաֆիկինգով զբաղվող կազմակերպություններն այդ երեւոյթի շատ զոհերի հետ անմիջական շփման մեջ չեն լինում եւ չեն կարող հեշտությամբ գտնել նրանց: Մյուսը կապված էր այն հանգամանքի հետ, որ թրաֆիկինգի զոհ դարձած անձիք, որոնց նույնիսկ հաջողվեց գտնել եւ կապեր հաստատել, կարող է ցանկություն չհայտնեին մասնակցելու ուսումնասիրությանը:

Խորացված հարցազրույցների համար հավելյալ հարցվողներ հայտնաբերելու նպատակով կիրառվեց այսպես կոչված «ձնագնդի» մեթոդը: Մեկնարկային կետն այն 48 հարցվածներն էին, որոնց հաջողվեց բացահայտել Գլուխ 1-ում նկարագրված հասարակության իրազեկվածության ուսումնասիրության ընթացքում, եւ որոնք հարցազրույցների ժամանակ աշխատանքային շահագործման եւ/կամ թրաֆիկինգի զոհ էին իրենց համարել: Նրանցից յուրաքանչյուրին խնդրեցին ասել իրենց ճանաչած բոլոր այն մարդկանց անունները, որոնք միգրանտ աշխատողի կարգավիճակում աշխատանքային շահագործման կամ թրաֆիկինգի զոհի համանման փորձ են ունեցել: Նոր

հայտնաբերված ենթադրյալ զոհերին նույնպես խնդրեցինք այդպիսի փորձ ունեցող մարդկանց անուններ տալ, եւ այսպես շարունակ: Ընդհանուր առմամբ 132 հավելյալ աշխատանքային շահագործման եւ/կամ թրաֆիկինգի ենթադրյալ զոհեր են հայտնաբերվել, որոնք էլ մասնակցեցին հատուկ հարցազրույցներին: Այդ հարցազրույցներն անցկացնելու նպատակով մի քանի ոչ կառավարական կազմակերպություններից, այդ թվում՝ «Հույս եւ օգնություն», UMCOR եւ Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հիմնադրամից, փորձառու անդամներ ընտրվեցին:

Ընդհանուր առմամբ ՀԱԱ-ն խորացված հարցազրույցներ անցկացրեց 9 քաղաքում եւ 4 գյուղում: Հարցվածների մեծամասնությունը Երեւանից, նաև Լոռվա եւ Շիրակի մարզերից էր: Խորացված հարցազրույցների ընդհանուր 132 հավելյալ մասնակիցներից 58-ին հանդիպեցինք Երեւանում, 27-ին՝ Վանաձորում, 18-ին՝ Գյումրիում, 10-ին՝ Արվյանում եւ մնացած 19 անձանց՝ Էջմիածնում, Ստեփանավանում, Սպիտակում եւ Իջեւանում, ինչպես նաև չորս գյուղում՝ Շիրակամուտում, Մարգահովտում, ճոճկանում եւ Բազումում (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 36. Խորացված հարցազրույցների անցկացման վայրեր**): Նրանք բոլորն էլ եղել են արտասահմանում, մեծամասնությունը (86,3%)՝ 1999-2004 թվականներին: Գերակշռող մեծամասնությունն (92,4%) աշխատանք փնտրելու նպատակով է մեկնել արտասահման:


Հասարակության իրազեկվածության ուսումնասիրության ընթացքում ենթադրյալ զոհեր համարված 48 հարցվածներից 10-ը Երեւանից էին, 7-ը՝ Գյումրիից, 6-ը՝ Հրազդանից, 4-ը՝ Վանաձորից, 4-ը՝ Վարդենիսից, 2-ը՝ Արվյանից, 2-ը՝ Լիճք գյուղից, մնացածներն այլ վայրերից՝ յուրաքանչյուրից մեկական հարցված: (Բնակավայրերի մանրամասների համար տե՛ս **Հավելված 1, Աղյուսակ 35. Միգրացիայի արդյունքում իրենց շահագործման ենթարկված համարող հարցվածների բնակավայրեր**):

## 2.2 Հիմնական արդյունքներ

### 2.2.1 Սեռ եւ տարիք

132 հարցվածների 66.7%-ը տղամարդիկ էին, իսկ 33.3%-ը՝ կանայք: Նկար 5-ը ցույց է տալիս, որ հարցվածների կեսից ավելին միջին տարիքի տղամարդիկ են, իսկ կանայք ավելի երիտասարդ են (մինչեւ 30 տարեկան):


**Նկար 5: Խորացված հարցազրույցների մասնակիցների սեռական եւ տարիքային համամասնությունը**



### 2.2.2 Կրթություն եւ զբաղվածության կարգավիճակ

Հարցվածների երկու երրորդը միջնակարգ կրթություն ուներ, մեկ երրորդը՝ բարձրագույն կամ անավարտ բարձրագույն: Կանանց 80%-ը ուներ միջնակարգ եւ միայն 16,4%՝ բարձրագույն կրթություն: Հարցվածների գրեթե կեսը (47,0%) հարցազրույցի պահին աշխատանք չուներ, 12,1%-ը «սպիտակ օձիքավոր» աշխատող էր, 15,9%-ը ուներ իրենց սեփական գործը եւ 12,1%-ը «կապույտ օձիքավոր» (ֆիզիկական աշխատանքով զբաղվող) (Տե՛ս Հավելված 2, *Աղյուսակ 39 Ներկայիս զբաղմունքը*):

**Նկար 6: Զբաղվածության կառուցվածքը խորացված հարցազրույցների մասնակիցների շրջանում**



Ինչպես կարելի է տեսնել *Նկար 6-ում*, ԽՀ հարցվածների խմբում աշխատանք չունեցողների տոկոսը (48,0%) երկու անգամ շատ է, քան ուսումնասիրված ընդհանուր բնակչության շրջանում (22,4%)։ Տնային տնտեսուհիների, ուսանողների եւ թոշակառուների տոկոսը մի քանի անգամ փոքր է (Համեմատե՛ք *Նկար 1. Զբաղվածության կարգավիճակ* )։ Այս խմբի հարցվածներից շատերն իրենց սեփական գործն ունեն (15,9%)։ Ուսումնասիրված ընդհանուր բնակչության շրջանում իրենց սեփական գործն ունեցողների քանակը չէր գերազանցում 5%-ը։ Պարզ է, որ ԽՀ հարցվածների խմբում ավելի շատ չաշխատողներ եւ իրենց սեփական գործն ունեցողներ կան, կամ այլ խոսքով՝ մարդիկ, որոնք աշխատանք չունեն Հայաստանում եւ աշխատանք փնտրելու եւ բիզնեսի նպատակով արտասահման են մեկնում, եւ ռիսկային իրավիճակներում են հայտնվում։

Ուսումնասիրված ընդհանուր բնակչության եւ ԽՀ հարցվածների միջին ամսական եկամուտների համեմատությունը ներկայացված է հետեւյալ աղյուսակում (տե՛ս հաջորդ էջում)։

<b>Աղյուսակ 3. Խորացված հարցազրույցի հարցվածների եկամտի կառուցվածքը</b>		
<b>Եկամուտը ՀՀ դրամով</b>	<b>Ընդհան. բնակչության ուսումնասիրություն</b>	<b>ԽՀ</b>
10 000 դրամից պակաս	10,7 %	7,6 %
10 000 – 50 000 դրամ	47,6 %	53,7 %
50 000 – 150 000 դրամ	26,4 %	15,1 %
150 000 դրամ եւ ավել	1,8 %	3,1 %
Չկա պատասխան	13,5 %	20,5 %
<b>Ընդհանուր</b>	<b>100,0 %</b>	<b>100,0 %</b>

*Աղյուսակ 3. Խորացված հարցվածների եկամտի կառուցվածքը:* Այս աղյուսակը ցույց է տալիս, որ խորացված հարցազրույցի մասնակիցների խմբում ցածր եկամուտ (մինչև 10 000 դրամ) ունեցող մարդկանց տոկոսն ավելի ցածր է, քան ուսումնասիրված ընդհանուր բնակչության շրջանում, եւ 150 000 դրամ եւ ավել եկամուտ ունեցող մարդկանց տոկոսը որոշ չափով ավելի մեծ է:

**2.2.3 Ամուսնական կարգավիճակ եւ առողջական վիճակ**

Պետք է նշել, որ խորացված հարցազրույցների մասնակիցների 62.9%-ը ամուսնացած էին, եւ այս տոկոսային հարաբերակցությունը համապատասխանում է ուսումնասիրված ընդհանուր բնակչության ամուսնացածների տոկոսին (62.8%), սակայն ամուսնալուծվածների տոկոսն այդ խմբում ավելի մեծ էր (11.4%), քան ընդհանուր բնակչության պարագայում (4.2%).

Տղամարդկանց մեծամասնությունն ամուսնացած էր (85,2%), իսկ կանանց միայն 24,3%-ը: Կանանց մեծամասնությունը բաժանված (41%) կամ ամուրի էր (26,1%): Տղամարդկանցից միայն մեկն էր բաժանված (0,8%): Սա նշանակում է, որ տղամարդիկ արտասահմանում աշխատանք են փնտրում իրենց ընտանիքների համար փող վաստակելու համար, մինչդեռ արտասահման մեկնող չամուսնացած կամ բաժանված կանայք հոգում են իրենց եկամտի խնդիրը:

Կան նաեւ տարբերություններ առողջական վիճակում: Ընդհանուր բնակչության

ուսումնասիրության մասնակիցների 96,8%-ը նշել են, որ իրենք առողջ են եւ այդ պահին առողջական խնդիրներ չունեն: Սակայն խորացված հարցազրույցների մասնակիցների 84,1%-ը նշել է, որ առողջ է: Այս խմբի առողջ անդամների թիվը 12,7%-ով պակաս է:

**2.2.4 Նպատակակետ երկրներ**

Շահադիտական նպատակով սեռական շահագործման համար հայ կանանց հիմնական նպատակակետ երկրներն էին Միացյալ Արաբական Էմիրությունները եւ Թուրքիան: Մարմնավաճառության մեջ բռնի ներգրավված կանանց (ինչպես հարցազրույցի ընթացքում նշվեց նրանց կողմից) 40,7%-ը Թուրքիայում է եղել, իսկ 44,4%-ը՝ Միացյալ Արաբական Էմիրություններում (**Տե՛ս ստորեւ, Աղյուսակ 4. Հարցվածների հետ պատահած աշխատանքային շահագործման եւ մարմնավաճառության դեպքերը, ըստ երկրների**):

Աշխատանքային շահագործման տեսակետից առաջնային նպատակակետ երկիրը Ռուսաստանն էր: Հարցվածների 58,1%-ը եղել է Ռուսաստանում, եւ մեծամասնությունը միջին տարիքի տղամարդիկ էին:

Աղյուսակ 4. Հարցվածների հետ պատահած աշխատանքային շահագործման եւ մարմնավաճառության դեպքերը, ըստ երկրների				
	Երկիր	Աշխատանքային շահագործում	Մարմնավաճառություն	Ընդամենը
1	Ռուսաստան	68	---	68
2	Իրան	1	1	2
3	Թուրքիա	7	9	16
4	Գերմանիա	2	---	2
5	Հունաստան	2	---	2
6	Լեհաստան	3	---	3
7	Ուկրաինա	3	---	3
8	Թուրքմենստան	1	---	1
9	Սիրիա	---	1	1
10	Ղազախստան	2	---	2
11	Թաիլանդ	1	---	1
12	Բելգիա	1	---	1



Աղյուսակ 4. Հարցվածների հետ պատահած աշխատանքային շահագործման եւ մարմնավաճառության դեպքերը, ըստ երկրների				
	Երկիր	Աշխատանքային շահագործում	Մարմնավաճառություն	Ընդամենը
13	ԱՄՆ	1	---	1
14	ՄԱԷ	2	12	14
	<b>Ընդամենը</b>	<b>94</b>	<b>23</b>	<b>117</b>

**2.2.5 Փոխադրումների, մաքսանեցության եւ միգրացիայի եղանակներ**

Մինչ նպատակակետ երկրներ մեկնելը 31 հոգի (23,4%) մուտքի արտոնագիր չեն ունեցել եւ 8 հոգի (6,1%) նույնիսկ տեղյակ չէին մուտքի արտոնագրի անհրաժեշտության մասին (**Տե՛ս Հավելված 2. Աղյուսակ 40. Ունեցե՞լ եք նպատակակետ երկրի մուտքի վավեր արտոնագիր**): Նրանց մեծամասնությունը (96 հոգի, 72,6%) տվյալ երկրում աշխատելու համար որեւէ գրավոր կամ բանավոր նախնական համաձայնագիր չունեն (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 41. Դուք աշխատանքի պայմանավորվածություն ունեցե՞լ եք նպատակակետ երկրում**): Նրանց 19,7%-ը նպատակակետ երկիր ոչ ուղիղ ճանապարհով է մեկնել՝ տարանցիկ պետության միջոցով (սովորաբար Ռուսաստանի տարածքով) (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 42. Դուք այնտեղ մեկնել եք ուղղակիորե՞ն, թե մեկ այլ երկրից**): Հարցվածներից 15-ը վերավաճառվել են (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 43. Ձեզ վաճառե՞լ են մեկ այլ անձի**):

Երկու հարցվածներ նույն երկիր վերադառնալու իրենց պատրաստակամությունն են հայտնել, մինչդեռ այլ երեքը նշել են, որ իրենք ավելի ուշ կքննարկեն այդ քայլը: Ընդհանուր առմամբ, բոլոր հարցվածներից քառասուներկուսը (31,8%) ցանկություն հայտնեցին վերստին գնալ նույն երկիր (**Տե՛ս Հավելված 2. Աղյուսակ 44. Դուք կրկին կգնա՞ք նույն երկիրը, ուր եղել եք**): Մարմնավաճառության մեջ ներգրավված 23 կանանցից երկուսն ասացին, որ ցանկանում են վերադառնալ եւ երեքը՝ որ կմտածեն այդ մասին:

**2.2.6 Միջնորդներ եւ խաբեություն**

132 հարցվածներից 66-ը (50,0%) ճանաչում էին միջնորդների եւ արտասահման մեկնելու համար օգտվում էին նրանց ծառայություններից (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 50. Եթե այդպիսի միջնորդներ ճանաչում եք, երբեւիցե օգտվե՞լ եք նրանց**

*ծառայություններից):*

Պատասխանելով այն հարցին, թե ով է կազմակերպել իրենց ուղևորությունը, հարցվածները նշեցին. ճանապարհորդական գործակալություններ (6,8%), մասնավոր միջնորդներ (12,1%), հավաքագրման եւ ամուսնական գործակալություններ (4,6%), բարեկամներ, ընկերներ (26,5%), կամ մարդիկ, ովքեր արդեն արտասահմանում աշխատում էին (6,1%): Մնացած 46,2%-ը սեփական ուժերով էր իրականացրել ճամփորդությունը (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 51. Ո՞վ է կազմակերպել Ձեր ճանապարհորդությունը):**

Հարցվածների շուրջ մեկ երրորդը (32,6%) ճամփորդության համար դրամ էր վճարել միջնորդներին (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 52. Արտասահման մեկնելու համար ստիպված եղե՞լ եք վճարել գործակալին):** 32 հոգի դրամ են պարտք վերցրել եւ հայտնվել ծանր լծի տակ, եւ 11 հարցված, իրենց գնահատմամբ, վաճառվել են (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 53. Արդյո՞ք այն Ձեզ պարտքի մեջ է գցել կամ ստիպել է վաճառել Ձեր ունեցվածքը):**

Հարցվածների 35,6%-ը նշեց, որ ճամփորդությունը կազմակերպած միջնորդների կողմից խաբվել են (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 54. Երբեւիցե խաբվե՞լ եք արտասահմանյան ճանապարհորդությունը կազմակերպած միջնորդների կողմից):** Ոմանք խաբվել են անհատ միջնորդների (50,5%), հավաքագրման (21,3%), ճանապարհորդական (14,1%) կամ ամուսնական (14,1%) գործակալությունների կողմից:

Հարցվածներն ասացին, որ միջնորդները խաբել են իրենց` սխալ տեղեկություններ տալով (61,7%), շահագործելով` իբրեւ բանվորների (8,5%), առաջարկելով այլ, դժվար աշխատանք (2,1%) եւ վճարելով մասամբ (12,8%) (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 55. Եթե խաբվել եք միջնորդների կողմից, ապա ինչպե՞ս):**

Համաձայն հարցվածների պատասխանների, սխալ տեղեկությունները սովորաբար տրամադրում են ճանապարհորդական գործակալությունները (38,4%), անհատ միջնորդները (36,1%) կամ հավաքագրող գործակալությունները (26,2%): Աշխատանքային շահագործման դեպքերն ավելի հաճախ էին պատահում, երբ ճամփորդությունները կազմակերպում էին անհատ միջնորդները (51,4%), հավաքագրող (32,8%) կամ ամուսնական (15,3%) գործակալությունները: Մյուս կողմից, հարցվածներն ավելի հաճախ էին շահագործման ենթարկվում, երբ

սեփական ուժերով էին կազմակերպում ճամփորդությունը, կամ ընկերների, բարեկամների եւ արդեն արտասահմանում աշխատող մարդկանց օգնությամբ: Սա նշանակում է, որ մարդիկ արտասահմանում ապրելու եւ աշխատելու պայմանների մասին բավականաչափ եւ բավարար տեղեկություն չունեն:

**2.2.7 Շահագործման եւ բռնության ձեւերը, որոնցից տուժել են հարցվածները**

132 հարցվածների երկու երրորդը (71,2% կամ 94 հոգի) աշխատանքային շահագործման են ենթարկվել, 17,4% (23) մարմնավաճառության մեջ են ներգրավված եղել, եւ 5.3% (7) ստրկության եւ բռնության այլ տեսակներից են տուժել (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 37. Գործնականում, դժվարության մեջ հայտնվելիս, ստիպված հայտնվե՞լ եք շահագործման կամ նվաստացնող իրավիճակում**): Հարցվածների 56,1%-ը նշել են, որ գործատերերն իրենց չեն վճարել կամ մասամբ են վճարել (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 38. Երբեւիցե խաբվե՞լ եք գործատուի կամ անուսնու կողմից (եթե անուսնացած եք արտասահմանում): Ինչպե՞ս**):

Հարցվածների մեծամասնությունը բողոքել է կեցության եւ աշխատանքային վատ պայմաններից: Հետազոտության մասնակիցների 63,6%-ը ցածր աշխատավարձ է ստացել, 43,9%-ից արտաժամյա աշխատանք է պահանջվել: 34,1%-ը նշել են, որ ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումը սովորական երեւույթ է եղել: Նրանցից 22,7%-ը նշել է տեղաշարժի սահմանափակ լինելու հանգամանքը, 20,5%-ը ասացին, որ իրենց անձնագրերը բռնագրավվել են, եւ 15,9%-ը հաճախորդներին մերժելու ազատություն չունեին<sup>4</sup>: (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 38. Երբեւիցե խաբվե՞լ եք գործատուի կամ անուսնու կողմից (եթե անուսնացած եք արտասահմանում): Ինչպե՞ս**):

---

<sup>4</sup> Մեկից ավել պատասխանի հնարավորություն է տրվել:

Այս հարցին տրված պատասխանները տարբերվում են միմյանցից՝ կախված հարցվածների սեռից.

<b>Աղյուսակ 5. Հարցվածների բավարարվածությունն աշխատանքային պայմաններից</b>			
	<b>Աշխատանքային պայմաններ</b>	<b>Տղամարդիկ</b>	<b>Կանայք</b>
1	Բավարար	20,8	9,1
2	Անձնագրի բռնագրավում	4,8	54,5
3	Տեղաշարժի սահմանափակում	9,6	52,7
4	Երկար աշխատանքային օր	41,6	34,5
5	Ֆիզիկական եւ հոգեբանական բռնություն	23,2	36,4
6	Ցածր վարձատրություն	69,6	40,0
7	Հաճախորդներին մերժելու ազատության բացակայություն	0,8	38,2

*Աղյուսակ 5-ը՝ Հարցվածների բավարարվածությունն աշխատանքային պայմաններից, ցույց է տալիս, որ կանայք ավելի խիստ արգելքների են ենթարկվել, քան տղամարդիկ:*

Հարցվածների կեսն ասաց, որ իրենց՝ իբրեւ միգրանտների, իրավունքները ոտնահարվել են, 31,1%-ը նշեց, որ դա տեղի էր ունենում հաճախ, եւ 14,4%-ը՝ ժամանակ առ ժամանակ (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 56. Ձեր իրավունքները՝ իբրեւ միգրանտի, երբեւիցե ոտնահարվել է՞ն**): Ոմանք նշում էին, որ իրենց ստիպել են զբաղվել չպաշտպանված սեքսով (30,0% կամ իրավունքները ոտնահարված բոլոր 60 կին հարցվածներից 18-ը), մինչդեռ մյուսները գտնում էին, որ այն պայմանները, որոնցում իրենց ստիպում էին աշխատել, հավասարազոր էին ստրկության (38,3%): Հարցվածների կեսից ավելին (58,3%) նշեցին անմարդկային եւ նվաստացուցիչ վերաբերմունքը (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 57: Եթե Ձեր իրավունքները՝ իբրեւ միգրանտի, ոտնահարվել են, ապա ինչպես**): Արդյունքում, նրանց 72,0%-ը ֆիզիկական կամ հոգեբանական վնաս է կրել (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 58. Վատ վերաբերմունքի պատճառով որեւէ ֆիզիկական կամ հոգեբանական վնաս կրե՞լ եք**):

**2.2.8 Ներգրավում կոմերցիոն սեքսի մեջ**

Հարցվածների կեսը (53,8%) տեղյակ էր այն դեպքերի մասին, երբ արտասահմանում աշխատելու հրավիրված կանայք ի վերջո ներգրավվում են շահադիտական նպատակներ հետապնդող սեքսի մեջ (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 45. Ձեզ հայտնի՞ է որեւէ դեպք, երբ կանայք հրավիրվել են աշխատելու իբրեւ պարուհիներ, մատուցողներ, երեխա խնամողներ, դայակներ, սակայն ի վերջո նրանց ստիպել են կոմերցիոն սեքսով զբաղվել**):

18,2%-ը նշեց, որ տեղյակ են դեռահասներին եւ տղամարդկանց (12,1%) մարմնավաճառության մեջ բռնի ներգրավելու դեպքերի մասին (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 46. Ձեզ հայտնի՞ է որեւէ դեպք, երբ տղամարդկանց նկատմամբ բռնացել են եւ շահագործման ենթարկել, կամ երբ նրանց հարկադրել են կոմերցիոն սեքսով զբաղվել** եւ **Աղյուսակ 47. Ձեզ հայտնի՞ է որեւէ դեպք, երբ երեխաների նկատմամբ բռնացել են եւ շահագործման ենթարկել, կամ երբ նրանց հարկադրել են կոմերցիոն սեքսով զբաղվել**):

**2.2.9 «Թրաֆիկինգ»-ի մասին տեղյակություն**

Հարցվածների 31,8%-ն ասաց, որ ծանոթ է «թրաֆիկինգ» տերմինի հետ (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 48. Ձեզ ծանոթ՞ է «թրաֆիկինգ» տերմինը**): Դրա մասին տեղյակ կանանց թիվն (50,9%) ավելի էր, քան տղամարդկանցը (34,4%), եւ նմանապես՝ երիտասարդների թիվը (18-25 տարիքային խումբ, 66,7%) քան միջին տարիքայիններինը (35,3%):

**2.2.10 Վերադարձ տուն**

Հարցվածների մեծամասնությունը սեփական միջոցներով է տուն վերադարձել (77,3%): Մյուսները վերադարձել են տեղի ոստիկանության օժանդակությամբ (7,6%), կազմակերպիչների (4,4%) կամ դեսպանությունների օգնությամբ (1,5%) (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 59. Ինչպե՞ս եք վերադարձել հայրենիք**): 132 հարցվածներից միայն 12-ն են աջակցության խնդրանքով դիմել արտասահմանում հայկական առաքելություններին, եւ նրանցից միայն յոթն է որեւէ օժանդակություն ստացել (**Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 60. Արտասահմանում գտնվող ՀՀ**

առաքելությունից երբեկիցե անձամբ հայցե՞լ եք օգնություն եւ Աղյուսակ 61. Եթե արտասահմանում գտնվող ՀՀ առաքելությունից հայցել եք օգնություն, արդյոք ստացե՞լ եք այն): Մյուսները հրաժարվել են ՀՀ առաքելությունների օգնությունից կամ կապվելու հնարավորություն չեն ունեցել (Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 62. Եթե արտասահմանում գտնվող ՀՀ առաքելությունից օգնություն չեք ստացել, ապա ինչո՞ւ):

Հարցվածների միայն մի փոքր հատվածն էր (12,1%) տեղյակ արտասահմանում գործող ոչ կառավարական եւ միջազգային կազմակերպությունների գոյության մասին, որոնք օգնություն են ցուցաբերում տուժածներին (Տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 63. Ձեզ հայտնի՞ է բռնության զոհերին օգնելու առաքելությամբ արտասահմանում գործող որեւէ կազմակերպություն):

### 2.3 Վերլուծություն եւ եզրակացություններ

Խորացված հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ միգրացիայի համատեքստում տղամարդիկ ավելի շատ են առնչվում շահագործման հետ, քան կանայք, ուր միջին տարիքի տղամարդիկ ամենամեծ խումբն են կազմում: 132 հարցվածների ընդհանուր կրթական մակարդակը համեմատաբար բարձր էր: Գործազուրկների համամասնությունը բավականին բարձր էր. հարցվածների գրեթե կեսը հարցազրույցի պահին աշխատանք չուներ:

Միացյալ Արաբական Եմիրությունները եւ Թուրքիան կանանց առեւտրային շահագործման տեսակետից գլխավորում են նպատակակետ երկրների ցուցակը, մինչդեռ Ռուսաստանը աշխատանքային շահագործման առումով թիվ մեկ նպատակակետ երկիրն է համարվում՝ հաստատելով Գլուխ 1-ում նկարագրված հասարակական կարծիքը:

Խորացված հարցազրույցները ցույց են տալիս, որ հարցվածների գրեթե մեկ երրորդն առանց մուտքի արտոնագրի է մեկնել նպատակակետ երկրներ: Հետաքրքիր է, որ նրանց երկու երրորդը նպատակակետ երկրներում գտած կամ խոստացված աշխատանքը չուներ: Հարցվածների գրեթե 18%-ը՝ բոլորը կանայք, իզական սեռի հարցվածների 25%-ը, ասացին, որ վերավաճառվել են:

Հարցվածների մեծամասնությունը ճամփորդությունը կազմակերպել է ինքնուրույն կամ բարեկամների, ընկերների եւ արդեն նպատակակետ երկրում գտնվող

մարդկանց օգնությամբ, մեկ երրորդը ստիպված էր վճարել միջնորդներին: Հավասարապես, մեկ երրորդն իրեն միջնորդների կողմից խաբված էր զգում՝ գլխավորապես, սխալ տեղեկություն ստանալու հարցով: Միջնորդների ծառայություններից հաճախակի օգտվելը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ավելի լավ կարգավորել աշխատանքային միգրացիան եւ հնարավոր միգրանտներին արտասահման մեկնելու եւ այնտեղ աշխատելու օրինական եղանակի վերաբերյալ ավելի շատ տեղեկություն տալ:

Հարցվածների ավելի քան երկու երրորդն աշխատանքային շահագործման է ենթարկվել, 17,4%-ն ստիպված է եղել մարմնավաճառությամբ զբաղվել եւ եւս 5,3 %-ը՝ ենթարկվել է ստրկության կամ բռնության այլ ձեւերի: Մինչդեռ, աշխատավարձ չվճարելը կամ ցածր վարձատրելը բավականին լայն է տարածված: Հարցվածների կեսը նաեւ նշել է անմարդկային եւ ստորացուցիչ վերաբերմունքը եւ 72.0%-ը հայտնել է, որ տուժել է ֆիզիկապես եւ հոգեպես: Մասնավորապես, կանայք նշել են, որ իրենց տեղաշարժը սահմանափակված էր, իսկ անձնագրերը՝ բռնագրավված:

Հարցվածներից մի քանիսն ասացին, որ ցանկանում են վերադառնալ նպատակակետ երկրներ՝ նշելով, որ իրենց ներկա վիճակն ավելի վատ են գնահատում են, քան արտասահմանում շահագործման ժամանակ:

Թեեւ հարցվածների կեսից ավելին ասաց, որ իրենց՝ որպես միգրանտների, իրավունքները ոտնահարվել են, գրեթե կեսն ասաց, որ իրենց հետ դա չի պատահել: Դա կարելի է բացատրել իրենց իրավունքների մասին իրազեկության բացակայության հանգամանքով:

Հարցվածների մեծամասնությանը հայտնի էին դեպքեր, երբ կանայք հրավիրվում են արտասահման աշխատելու, բայց ի վերջո ներգրավվում են շահադիտական նպատակ հետապնդող սեքսի մեջ: Որոշ մասն էլ գիտեր դեռահասների կամ տղամարդկանց մասին: Գրեթե 31,8%-ին հայտնի էր «թրաֆիկինգ» տերմինը, ընդ որում կանայք եւ երիտասարդներն, ընդհանուր առմամբ, ավելի լավ էին տեղեկացված՝ միգուցե հեռուստացույցի առջեւ ավելի երկար ժամանակ գտնվելու հետեւանքով, ինչն, ինչպես պարզվեց, խնդրո առարկայի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրն է հանդիսանում:

Հարցվածների զգալի մեծամասնությունն առանց որեւէ օժանդակության է տուն

վերադարձել եւ միայն շատ քչերն են տեղյակ զոհերին աջակցող ոչ կառավարական եւ միջազգային կազմակերպությունների մասին՝ չնայած, դրանք գոյություն ունեն և ի վիճակի են աջակցել կարոտյալներին:

Ընդհանուր առմամբ, 132 հարցազրույցը այնպես չէր մշակված, որ հնարավոր լիներ հաստատել, թե տվյալ անհատը իսկապես թրաֆիկինգի զոհ է ճանաչվում, թե՛ ոչ: Հաշվի առնելով թրաֆիկինգի սահմանման բարդությունը եւ կոնկրետ հանգամանքների կարեւորությունը, այս կարգավիճակի սահմանումը չի կարելի ակնկալել նման հետազոտությունից: Այդուհանդերձ, ուսումնասիրությունն այն փաստն է արձանագրում, որ հայաստանցի միգրանտները միջնորդների կողմից բավական շատ խաբվում են հնարավորությունների վերաբերյալ, միգրանտների ազատությունը սահմանափակվում է, իսկ նրանց անձնագրերը՝ բռնագրավվում են, եւ շատերը տառապում են ֆիզիկական եւ հոգեբանական բռնությունից: Այս համապատկերում հարցազրույցների մասնակիցներից ոմանց հստակորեն կարելի է բնութագրել իբրեւ թրաֆիկինգի զոհ:



**ՉԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱԿԵՏ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

**3.1 Մեթոդաբանություն**

Հետագա հետազոտության հնարավորությունները երեք հիմնական նպատակակետ երկրում գնահատելու համար՝ երկու հոգուց բաղկացած երեք խումբ ուղեւորվեց Միացյալ Արաբական Էմիրություններ, Հունաստան եւ Թուրքիա: Յուրաքանչյուր խմբում կար Հայկական սոցիոլոգիական ընկերակցության մեկական ներկայացուցիչ, իսկ խմբերի մյուս անդամներն էին ՄՄԿ կամ ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակների ներկայացուցիչները: Այդ առաքելությունների հիմնական նպատակը համապատասխան հետազոտությունների պատրաստումն ու դեպի տվյալ պետություն Հայաստանից ապօրինի միգրացիայի վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացումն էր՝ կենտրոնանալով թրաֆիկինգի վրա: Բոլոր առաքելություններն էլ հանդիպել են տվյալ պետությունների պաշտոնական ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների եւ հայ համայնքի անդամների հետ: Թրաֆիկինգի դեմ պայքարով, միգրացիայի հարցերով եւ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տեղական ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաեւ հայ համայնքում գործող կազմակերպությունների եւ ներկայացուցիչների օգնությամբ, երեք խմբերն էլ Հայաստանից թրաֆիկինգի ենթադրյալ եւ / կամ հնարավոր զոհերի հետ հարցազրույցներ անցկացնելու համար տարբերակներ մշակեցին:

Միացյալ Արաբական Էմիրություններում Շարժայի Ամերիկյան Համալսարանի սոցիոլոգիայի բաժնի ղեկավարության եւ մի շարք հայ ուսանողների հետ միասին հարցազրույցներ անցկացնելու պայմանավորվածություն ձեռքբերվեց: Հունաստանում հետազոտությունը կատարվեց Հայաստանի Հանրապետության դեսպանատան եւ Աթենքում հայ համայնքի ներկայացուցիչների օգնությամբ, Թուրքիայում՝ Սոցիոլոգիական ուսումնասիրությունների կենտրոնի (ՍԱՍ), «Մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամ» ոչ կառավարական կազմակերպության եւ Ստամբուլի հայերի հետ համագործակցությամբ:

## 3.2 Հիմնական արդյունքները

### 3.2.1 Միացյալ Արաբական Էմիրություններ

2005 թվականի ապրիլի 16-22-ը ՀՍԱ-ի երկու անդամ այցելել են ԱՄԷ՝ այդ երկրում հետազոտության հնարավորություններին ծանոթանալու եւ Հայաստանից թրաֆիկինգի զոհերի վիճակի մասին հետազոտության հիմքը դնելու համար: Երկրի պաշտոնական ներկայացուցիչների եւ ոչ կառավարական կազմակերպությունների անդամների հետ բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն ձեռքբերվեց, որ Շարժայի Ամերիկյան Համալսարանի ասպիրանտուրայի բաժինը (ՇԱՀ) կլինի այն հաստատությունը, որը կանցկացնի հետազոտությունը, այդ նպատակով պետք է ստեղծվեր մի փոքր խումբ: Հետազոտությանն օգնող մարդկանց ընտրության ընթացքում Հայաստանից ժամանած խումբը զարմանքով հայտնաբերեց, որ հայ համայնքի առաջնորդներն ամենեւին էլ չողջունեցին ՀՍԱ-ի նախաձեռնությունը եւ առանձնապես հակված չէին օժանդակություն ցույց տալուն: Թեեւ խմբին հաջողվեց պարզել տվյալ երկրի հաստատության կարողությունը հետազոտությունը կատարելու առումով, սակայն կապեր հաստատելու եւ թարգմանությունը կազմակերպելու հարցերի շուրջ դեռ անհրաժեշտ էր հայ համայնքի հետ բանակցություններ վարել:

Ըստ ՀՀ հյուպատոսից ստացված տեղեկատվության, տարիներ առաջ թրաֆիկինգի բազմաթիվ դեպքեր գոյություն ունեին, որոնք հայտնի էին եւ քննարկվում էին ՄԱԷ-ում բնակվող հայերի շրջանում: Սակայն ժամանակի հետ կանանց թրաֆիկինգի հետ կապված իրավիճակը էապես փոխվեց, ինչը կապված էր իրավապահ մարմինների զգոնության բարձրացման, հաճախացած ստուգումների հետ: Հետեւաբար, ներկայումս ավելի քիչ դեպքեր են հայտի դառնում եւ համայնքը ավելի հազվադեպ է դրանք քննարկում: Միացյալ Արաբական Էմիրություններում Միգրացիայի միջազգային կազմակերպության ներկայացուցիչ Խալեդ Կադիրը հայտնեց, որ սեքս բիզնեսը Դուբայում ծաղկում է, իսկ թրաֆիկինգ կազմակերպողներն սեռական ստրկության մեջ մարդկանց ներգրավելու գործում ավելի կատարելագործված մեթոդների են դիմում:

Դուբայում սեքս ինդուստրիայի ամենահայտնի տեղերից մեկում՝ “Ցիկլոն” ակումբում մի քանի ռուս եւ հայ կանանց հետ զրույցներից պարզվեց, որ իրենց մուտքի արտոնագրերը թարմացնելու նպատակով միգրանտ կանայք հաճախ

այցելում են Իրան եւ ետ են վերադառնում փոքր ինքնաթիռներով: Դժվար էր ավելին իմանալ, քանի որ այցելուների հետ ոչ սովորական զրույցները կանանց արգելված էր:

Հայ համայնքի Խորհրդի նախագահի տեղակալ Մուշեղ Բեդիրյանը տեղեկացրեց, որ որոշում է ընդունվել ուսումնասիրություն կատարելու գործում ՀՍԱ-ին չաջակցելու մասին: Նա ասաց, որ դա Խորհրդի՝ որպես ընտրված ինքնակառավարվող մարմնի, քաղաքական որոշում է եւ համայնքից որեւէ մեկին չի թույլատրվում մասնակից լինել հետազոտությանը կամ այլ կերպ օգնել ՀՍԱ-ին: Նա նշեց, որ վերջերս Հայաստանից երկու լրագրող հետազոտություն են կատարել, եւ համայնքը հիասթափված է նրանց անհարգալից եւ ոչ համարժեք հրապարակումներից: ՄԱԷ-ում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արշակ Փոլադյանը հաստատեց, որ համայնքն իսկապես դժգոհ էր հրապարակումներից եւ դժվար կլինի նրանից օժանդակություն ստանալ, համենայն դեպս, տվյալ պահին:

### **3.2.2 Հունաստան**

2005 թվականի ապրիլի 29-ից մայիսի 6-ը ՀՍԱ-ի երկու մասնագետ եղել են Աթենքում՝ հետազոտության հնարավորությունները պարզելու եւ Հունաստանում հայ քաղաքացիների թրաֆիկինգի հետ կապված իրավիճակի հետազոտության հիմքը դնելու նպատակով:

Պաշտոնատար անձանց, համալսարանների եւ ոչ կառավարական կազմակերպությունների հետ բանակցությունների արդյունքում երեք հնարավոր շփման կամ «իրականացման» կետեր հաստատվեցին՝ տեղում հետազոտությունը կատարելու համար.

1. Հայ օգնության միություն (ՀՕՄ) գրասենյակն Աթենքում,
2. Հայ ուսանողներն Աթենքում,
3. Հայաստանի դեսպանատան աշխատակիցները:

Վերադարձից հետո ՀՍԱ-ի խումբը կապվեց ՀՕՄ գրասենյակի եւ Հունաստանում Հայաստանի դեսպանատան հետ, շնորհակալություն հայտնեց հանդիպումների

համար եւ վերահաստատեց ապագա համագործակցության ցանկությունն ու պայմանները:

ՀՕՄ-ի երեւանյան գրասենյակի հետ վերստին կապվելու ենք երկրի հյուսիսում գտնվող (հայ արտագաղթողների մեծամասնությունը բնակվում է այդտեղ) հայերի հարցման եւ ՀՍԱ-ի հարցաշարերը լրացնելու գործում ՀՕՄ-ի Հունաստանի գրասենյակի մասնակցության հարցը քննարկելու նպատակով: ՀՍԱ-ի անդամները հասկանում են, որ այցի արդյունավետությունը շատ բանում կախված է Հունաստանում հետագա գործողություններից: Անհրաժեշտ արդյունքներն ապահովելու համար մշտական եւ շարունակական կապեր պետք է հաստատվեն:

Նույնիսկ ՄՄԿ-ն տեղյակ չէր որեւէ տեղական ոչ կառավարական մի կազմակերպության մասին, որը զբաղված լիներ Հունաստանում թրաֆիկինգի խնդրով: Այս հանգամանքը նեղացնում էր հնարավոր համագործակցների շրջանակը եւ ՀՍԱ-ին հարկադրում մշված հնարավոր իրականացման կետերից կենտրոնանալ նվազագույնը մեկ կամ երկուսի շուրջ:

ՀՍԱ-ի խումբն Աթենքում բազմաթիվ վրացի եւ ռուս կանանց տեսավ: Վրացիները հիմնականում զբաղված էին առեւտրով, իսկ ռուսները դրան էին աշխատում մեծամասամբ տարեցների խնամքով եւ տների մաքրումով: Քաղաքի կենտրոնական հրապարակներից մեկից ոչ հեռու՝ մի հատուկ տեղում, ռուս կանանց համար մայրենի լեզվով տասնյակ աշխատանքի հայտարարություններ կային:

Հունաստանում Հայաստանի հյուպատոսն իրազեկեց Հունաստանում առկա ներգաղթի իրավիճակի մասին: Հունաստանում Հայաստանի 45 հազար քաղաքացի կա, որից 6 հազարն Աթենքում է: Երկրում հայ ապօրինի միգրանտների թիվը շատ է, նրանք համաձայն են շատ ցածր վարձատրությամբ ցանկացած աշխատանք կատարել: Հայաստանի քաղաքացիները դիմում են դեսպանատուն կորցրած փաստաթղթերի կամ համանման այլ հարցերի կապակցությամբ: Սակայն ավելի հաճախ հունական ոստիկանությունն է շփվում դեսպանատան հետ՝ արտաքսման դեպքերի հետ կապված հարցերով: Շաբաթական արտաքսման 1-2 դեպք է տեղի ունենում, գրեթե բոլորը տղամարդիկ են: Նրանք հիմնականում շինարարությամբ են զբաղվում կամ պատահական աշխատանք են կատարում՝ մեծամասամբ Սալոնիկ քաղաքում կամ հյուսիսային այլ բնակավայրերում: Երբ ոստիկանությունը գտնում է նրանց, այդ մարդիկ արտաքսման համար անհրաժեշտ փաստաթղթերի

ծեւակերպման նպատակով Հայաստանի դեսպանատուն են բերվում: Ըստ Հայաստանի դեսպանատան, Հունաստանում բնակվող հայերի կողմից որեւէ բողոք չի ներկայացվել: Վերջերս հայ միգրանտների թիվը Հունաստանում նվազել է. այսպիսով հայերի գաղթն այս երկիր այլևս այդքան ակտիվ չէ, որքան եղել է տարիներ առաջ: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ շատերը հասկանում են՝ այս երկրում աշխատանք գտնելու հնարավորությունները հասել են նվազագույնի: Յուրաքանչյուր ուրբաթ (Երեւան-Աթենք չվերթների օրերին) 1-2 հայ վերադառնում են Աթենքի օդանավակայանից՝ անգամ առանց երկիր մտնելու:

Ինչ վերաբերում է թրաֆիկինգի դեպքերին, շատ ավելի զոհեր կան Սուդանից, Ռուսաստանից, Բելառուսից, սակայն հյուպատոսը հայաստանցիների հետ կապված որեւէ դեպքի մասին չի լսել: Նա կարծում է, որ թրաֆիկինգի հայ զոհերի մեծամասնությանը փոխադրում են Միացյալ Արաբական Էմիրություններ: Շատերին խաբում են, ասելով, որ աշխատանք գտնելու նպատակով Հունաստան են տանում, բայց արդյունքում նրանք շահագործման են ենթարկվում ՄԱԷ-ում: Թեեւ մարմնավաճառությունն օրինականացված է Հունաստանում, նկատի ունենալով արտասահմանցի սեքս-աշխատողների հետ այս երկրում առկա պատկերը, թրաֆիկինգը այստեղ խնդիր է հանդիսանում:

Պարոն Դենիել Էստրասը, որը գլխավորում է ՄՄԿ-ի առաքելությունը Հունաստանում, նույնպես նշեց, որ հայերի աշխատանքային շահագործումը Հունաստանում ավելի լուրջ խնդիր է, քան սեքս թրաֆիկինգը: Նա հարցազրույցներ է վերցրել եւ խոսել է թրաֆիկինգի ավելի քան 300 զոհերի հետ Հունաստանում, եւ նրանցից ոչ մեկը հայ չի եղել:

ՀՕՄ-ը Աթենքում գործում է իբրեւ մեր հայրենակիցների համար «հավաքագրական գրասենյակ»: ՀՕՄ-ի միջոցով բազմաթիվ հայեր աշխատանք են գտել այդտեղ: Կազմակերպության աշխատողներն ասացին, որ Հունաստանում աշխատանք գտնելու հարցում բազմաթիվ հայ կանանց են օգնել եւ երբեք շահագործման հետ կապված բողոքներ չեն ստացել: Նրանք համաձայնեցին, որ շահագործման դեպքեր իսկապես գոյություն ունեն, բայց ոչ այն մարդկանց հետ կապված, ովքեր աշխատանք են գտել այդ գրասենյակի միջոցով: Համենայն դեպս, նրանք ավելացրեցին, որ որոշ հայ կանայք, որոնց իրենք օգնել են, վերստին եկել են գրասենյակ՝ խնդրելով մեկ այլ աշխատանք, քանի որ նրանց տվյալ պահի աշխատանքը չափազանց դժվար էր եւ/կամ քիչ վարձատրվող:

### 3.2.3 Թուրքիա

2005 թվականի ապրիլի 8-14-ին ՀԱԱ-ի երկու անդամների Թուրքիա կատարած այցի նպատակը Ստամբուլում հայ ապօրինի միգրանտների/թրաֆիկինգի զոհերի վիճակի ուսումնասիրություն կատարելու համար անհրաժեշտ պայմանների ապահովումն էր:

Այցի արդյունքներն են.

- Կապեր եւ աշխատանքային հարաբերություններ հաստատվեցին Ստամբուլի ՄՄԿ-ի գրասենյակի, մի ոչ կառավարական կազմակերպության, համալսարանական համայնքի, Ստամբուլի հայ համայնքի եւ սոցիոլոգիական գործակալության հետ, ինչը կարելի է օգտագործել տվյալ նախագծից դուրս:
- Նախագծի բարեհաջող ավարտի համար բոլոր նշված հաստատությունների եւ կազմակերպությունների աջակցության վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերվեց:
- Հետազոտության իրագործման համար ստեղծվեց կոորդինացման գործակալություն՝ «Մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամը (ՄՌԶՀ), հարցազրույցներ վարողները եւ աջակից կողմերը (ՍԱՄ, դր. Ֆերիաթ Քենթել, ՄՄԿ, «Մարմարա» հայկական թերթը Ստամբուլում):
- Հայազգի զոհերին հայտնաբերելու հարցում հարցազրույց վարողներին աջակցեց հայ համայնքը:
- Հայտնաբերվեցին թրաֆիկինգի ենթադրյալ զոհերի անունները եւ հեռախոսահամարները:

Երկիր ժամանած հայ խմբի գործադրած ջանքերին հակառակ, դժվար էր հետազոտությանը մասնակցել ցանկացող, հայերեն խոսող հարցազրույց վարողներ գտնել: Նրանք, ուն հաջողվեց գտնել, երիտասարդ էին եւ համապատասխան փորձ չունեին: Հարցազրույց վարողների անվտանգությունը մեկ այլ խնդիր էր՝ հաշվի առնելով երեւույթի թաքնված եւ ենթադրյալ կազմակերպված լինելու հանգամանքը, ինչը նշանակում էր, որ զոհերը կարող էին

խիստ հսկողության տակ լինել, եւ նրանց հետ շփվելը կարող էր վտանգ ներկայացնել հարցազրույց վարողների համար:

Մեկ այլ լուրջ խնդիր էր բյուջեի սահմանափակ լինելու հանգամանքը: ՍԱՄ-ը ներկայումս հետազոտություն է կատարում Անկարայի ՄՄԿ-ի համար՝ յուրաքանչյուր հարցազրույցի համար հարյուր ԱՄՆ դոլար վճարելով: Նրանք պատրաստակամություն հայտնեցին՝ ապահովելու ժապավեններով, ձայնագրիչներով, օգնելու հարցազրուցավարներ գտնելու եւ նրանց սովորեցնելու հարցում: Հետազոտության հաջողությունը կարող էր ապահովվել, եթե հարցազրույցներ վարելու նպատակով ենթապայմանագիր կնքված լիներ ՍԱՄ-ի տիպի մասնագիտական սոցիոլոգիական գործակալության հետ:

Ինչպես նշված էր, կիրառվելու էր «ձնակույտի» մեթոդը: Յուրաքանչյուր հարցազրույց մեկ կամ մեկուկես ժամ էր տևելու: Հարցազրուցավարները լինելու էին հայեր՝ տեղական հայ համայնքից (ուսանողներ, լրագրողներ, սոցիոլոգներ): Հարցազրույցները պետք է անցկացվեին հայերեն:

Որոշվեց, որ մեկ համակարգող գործակալություն է լինելու, լավագույն տարբերակը՝ մի ոչ կառավարական կազմակերպություն, որը պատասխանատու կլինի հարցազրուցավարներին վերահսկելու, գործընթացը համակարգելու եւ հարցաշարերը եւ/կամ ժապավենները ՀՍԱ-ին ուղարկելու հարցերում (մոտավորապես 5 հարցազրուցավար՝ յուրաքանչյուրը պատասխանատու տասը հարցվածների համար): Կողմերը ընդունեցին, որ հնարավոր է բավական բարդ լինի հարցվողների հայտնաբերումը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ թրաֆիկինգի վերաբերյալ թուրքական ոչ մի զեկույցում Թուրքիա թրաֆիկինգի ենթարկված զոհերի թվում որեւէ հայ չի հիշատակվում:

Տիկին Բեռնա Էրենը՝ ՄՈՁՀ-ի ղեկավարը, ներկայացրեց իր կազմակերպության թրաֆիկինգի դեմ ուղղված գործունեությունը: ՄՈՁՀ-ն սերտորեն համագործակցում է ոստիկանության հետ եւ դասընթացներ է կազմակերպում ոստիկանների, ժանդարմների, իրավաբանների եւ դատավորների համար: Տիկին Էրենը նշեց, որ դժվար կլինի գտնել զոհերին, հատկապես՝ հայ զոհերին: Այնուամենայնիվ, նա շատ դրական էր տրամադրված, եւ համաձայնեց համակարգել հետազոտական աշխատանքը:

ՄՄԿ-ի ստամբուլյան գրասենյակը ֆինանսական աջակցություն է ստացել USAID-

ից՝ թրաֆիկինգի հայտնաբերված զոհերի վերադարձը կազմակերպելու համար: Ըստ ՄՄԿ-ի Անկարայի գրասենյակի, Թուրքիա փոխադրվող թրաֆիկինգի զոհերի հիմնական աղբյուրն է Սուդանը: Ըստ Թուրքիայի ՄՄԿ 2003 թվականի զեկույցի, այստեղ հայեր չէին հայտնաբերված: Նմանապես, հայեր չկային եւ 55 զոհերի թվում, որոնք իրենց հարազատ երկրներն են վերադարձել 2005 թվականի հունվարից հետո, ինչպես նաեւ դրանից առաջ:

Ռուսաստանի հյուպատոս պարոն Յուրովսկին ասաց, որ չնայած Ռուսաստանի եւ Հայաստանի կառավարությունները համապատասխան պաշտոնական համաձայնագիր չունեն, ռուսական հյուպատոսությունը Ստամբուլում արձագանքում է հայ քաղաքացիներին, եթե դիմում են: 2004 թվականին օգնության խնդրանքով դիմել է Հայաստանի 40 քաղաքացի, իսկ 2003 թվականին՝ 36, գլխավորապես կորցրած անձնագրերի պատճառով: Հյուպատոսությունը կապվում էր ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ, եւ անձերի իսկությունը պարզելուց հետո այդ քաղաքացիներին անցաթղթեր էր տրամադրվում:

Հայ համայնքն ընդհանուր առմամբ, եւ հայկական «Մարմարա» թերթը, մասնավորապես, արձագանքեցին նախաձեռնությանը եւ աջակցում էին ամբողջ ընթացքում: Նրանց տվյալներով, Ստամբուլում Հայաստանից մոտ 3000 մարդ կա, որոնց մեծամասնությունն առանց օրինական կարգավիճակի է: Սա չի նշանակում, որ նրանք ապօրինաբար են մուտք գործել երկիր (գրեթե բոլորը օրինական եղանակով են մուտք գործում երկիր, քանի որ դրա համար հեշտ ռեժիմ է սահմանված), կամ չեն երկարացրել իրենց մուտքի արտոնագրերի ժամկետները, սակայն ավելի շուտ նրանք աշխատելու օրինական իրավունք չունեն եւ նրանց երեխաները, չլինելով Թուրքիայի քաղաքացիներ, չեն կարող դպրոց հաճախել: Պարոն Հաթեճյանի կարծիքով («Մարմարայի» գլխավոր խմբագիրն է) Ստամբուլում գտնվող հայերը պակաս խոցելի վիճակում են, քան օրինակ՝ Տրապիզոնի շրջանում հաստատվածները (որտեղ, իր տվյալներով, բազմաթիվ հայ կանանց իրենց կանքին հակառակ սեռական աշխատանք են ստիպում կատարել), քանի որ հայ համայնքը Ստամբուլում շատ ուժեղ է եւ կարող է աջակցել Հայաստանից եկած հայրենակիցներին:

### 3.3 Վերլուծություն եւ եզրակացություններ

Երեք նպատակակետ երկրներում հետազոտությունը ցույց տվեց, որ հայ ապօրինի



միգրանտների, այդ թվում թրաֆիկինգի զոհերի, հետ կապված իրավիճակը էապես փոխվել է 2001 թվականից ի վեր՝ ՄՄԿ-ի վերջին զեկույցից հետո:

Ամփոփելով Դուբայ կատարած այցի արդյունքները, պետք է նշել, որ կապեր են հաստատվել Շարժայի ամերիկյան համալսարանի ասպիրանտուրայի բաժնի հետ, որպես հիմնական (եւ թերեւս միակ) հաստատության, որն ի զորու է կատարել հետազոտությունը ՄԱԷ-ում: Այնուհետեւ մի քանի հարցումներ կատարվեցին եւ դր. Քիլլենի եւ գործընկերների հետ հետագա համագործակցությունը շարունակվեց հեռախոսով եւ էլեկտրոնային փոստով: Սակայն, դժբախտաբար, Շարժայի ամերիկյան համալսարանի ասպիրանտուրայի բաժնի եւ դր. Քիլլենի հետ անձամբ հետազոտության հետ կապված համագործակցությունը զարգացնելու մեր բոլոր ջանքերը անհաջողությամբ պսակվեցին: Հայ համայնքի կողմից ՄԱԷ-ում ՀՀ դեսպանատան օժանդակությամբ հայտնաբերումն ու թարգմանության աջակցությունն ապահովելու նպատակով առաջարկված ուղիները նույնպես չօգտագործվեցին: Ինչպես արդեն նշվել էր, տեղի հայ համայնքը վրդովված էր երկու հայաստանցի լրագրողների անպարկեշտ եւ ոչ համարժեք հրապարակումներից: Արդյունքում, հայ համայնքի խորհուրդը ՀՍԱ-ի հետազոտությունն իրականացնելու գործում չաջակցելու մասին քաղաքական որոշում ընդունեց: Ըստ այդ որոշման, հայ համայնքի անդամներին արգելվեց մասնակցել նախագծի իրականացմանը եւ որեւէ կերպ օժանդակել ՀՍԱ-ին: ՄԱԷ-ում ՀՀ-ի դեսպանը հաստատեց, որ համայնքն իսկապես վրդովված էր հրապարակումներից եւ այդ պահին դժվար էր նրանցից աջակցություն ստանալ: Այդուհանդերձ, Հունաստանում Հայաստանի դեսպանատան հյուպատոսը ինչպես նշեց՝ թրաֆիկինգի հայ զոհերի հիմնական մասին փոխադրում են Միացյալ Արաբական Էմիրություններ: Նրանցից շատերին խաբում են, ասելով, որ աշխատանք փնտրելու նպատակով Հունաստան են տանում, բայց փաստորեն, վերջիվերջո, շահագործման են ենթարկում ՄԱԷ-ում: Ի հավելում, մեր այցելուները բազմաթիվ հայ երիտասարդ կանանց են տեսել, որոնք ապօրինաբար մարմնավաճառությամբ են զբաղվում Դուբայի “Ցիկլոն” ակումբում եւ հյուրանոցներում:

Մարմնավաճառությունն օրինականացված գործունեություն է Հունաստանում եւ թրաֆիկինգը լուրջ խնդիր է, որովհետեւ այստեղ բազմաթիվ զոհեր կան, հատկապես Մոլդովայից, Ռուսաստանից եւ Բելառուսից: Սակայն Հունաստանը հայերի համար սեռական թրաֆիկինգի հիմնական նպատակակետ երկիր թվում է, թե չի հանդիսանում: Մինչդեռ մեր քաղաքացիների աշխատանքային

շահագործման խնդիր, այնուամենայնիվ, այստեղ կա: Դրա մասին են վկայում Հայաստանի դեսպանատնից ստացված տեղեկությունները շինարար բանվորների մասին, որոնցից ոմանք արտաքսվում են, ինչպես նաև ՀՕՍ-ի Աթենքի գրասենյակի աշխատակիցների հաստատումներն այն մասին, որ բազմաթիվ հայ կանայք իրենց են դիմում՝ ցանկացած աշխատանք գտնելու խնդրանքով: ՀՕՍ-ն նույնպես նշեց, որ Հունաստանում հստակորեն շահագործման դեպքեր կան՝ հաստատելով, որ այդ հայերից շատերն առանց աշխատանքի համապատասխան թույլտվության կամ այլ անհրաժեշտ փաստաթղթերի են ապրում Հունաստանում: Քանի որ ապօրինի աշխատանքային միգրանտները խուսափում են դիմել Հայաստանի դեսպանատն, ոչ կառավարական կամ այլ կազմակերպություններ՝ իրենց շահագործման կապակցությամբ բողոքելու նպատակով, ապա հեշտ չէր այդպիսի մարդկանց գտնելն ու հարցազրույց անցկացնելը:

Թեև բոլոր երեք պետություններում էլ հաջողվեց գործընկերների գտնել՝ թրաֆիկինգի եւ սեռական կամ աշխատանքային շահագործման զոհերի հետ հարցազրույցներ անցկացնելու համար, խորացված հարցազրույցների անցկացումը հնարավոր եղավ միայն Հունաստանում՝ Հայաստանից 20 ապօրինի միգրանտների հետ: Ծագումով հայ եւ ոչ վաղ անցյալում Հայաստանի քաղաքացի հանդիսացած տեղացի մի կին համաձայնեց հարցազրույցներ անցկացնել Աթենքում: Նա մասնակցեց ՀՄԱ-ի եւ ԵԱՀԿ-ի մասնագետների կողմից Հունաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ կազմակերպված հատուկ դասընթացներին: Նրանց վերադարձից երկու ամիս անց այդ կինը, որը խնդրեց չհրապարակել իր անունը, 20 ապօրինի հայ միգրանտների հետ հանդիպեց Աթենքում եւ հարցազրույցներ վարեց: Հարցազրույցների վերլուծությունը ցույց տվեց, որ նրանք բոլորն էլ (10 տղամարդ եւ 10 կին) Հունաստան էին տեղափոխվել դրան աշխատելու նպատակով եւ երկար ժամանակ այնտեղ ապօրինաբար են գտնվում:

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը դժվարացնում է նման հետազոտությունների նախաձեռնությունը: Հակառակ այն փաստին, որ հայկական աղբյուրները, այն է ՄՄԿ-ի 2001 թվականի թրաֆիկինգի մասին զեկույցը (*Կանանց եւ երեխաների թրաֆիկինգը Հայաստանի Հանրապետությունից: Հետազոտություն. ՄՄԿ, սեպտեմբեր 2001*) եւ տվյալ հասարակական իրազեկվածության ուսումնասիրությունը Թուրքիան մատնանշում են իբրեւ Հայաստանից

թրաֆիկինգի զոհերի համար հիմնական նպատակակետ երկրներից մեկը: Թուրքական աղբյուրները, այդ թվում ՄՄԿ-ի 2003 թվականի թրաֆիկինգի մասին զեկույցը (*Ապօրինի միգրացիան Թուրքիայում. ՄՄԿ, No.12, 2003*) Թուրքիա փոխադրվող թրաֆիկինգի զոհերի թվում որեւէ հայ չեն հիշատակում: Այս տարբերությունը, եթե միտումնավոր է, կարող է ազդել նախագծի արդյունքների ճշգրտության վրա եւ դժվարացնել նրա կատարումը: Ամեն դեպքում, ՀԱԱ-ի ներկայացուցիչները ականատես եղան, որ տեղացի հայերը տեղյակ են Ստամբուլի այն վայրերից, ուր կարելի էր տեսնել Հայաստանից բերված մարմնավաճառներին: Եւ այդպիսի տեղերը շատ են: Ինչպես հայտնի է, ապօրինի մարմնավաճառությունը թրաֆիկինգի դեպքերի տարածմանը նպաստող հիմնական միջավայրն է: Դժբախտաբար, անուղղակի փաստերի հիման վրա մենք միայն կարող ենք ենթադրություններ անել: Փաստարկված եզրակացություններ անելու համար անհրաժեշտ են միջազգային կազմակերպությունների եւ տեղական հետազոտական կենտրոնների հովանու ներքո անցկացված հատուկ հետազոտություններ:

Ընդհանուր առմամբ, մենք կարող ենք ասել, որ վերջին տարիների ընթացքում թրաֆիկինգի հանդեպ իշխանությունների եւ տեղական համայնքների վերաբերմունքը էապես հստակեցվել է: Հայաստանի դիվանագիտական առաքելություններն ավելի խիստ հսկողություն են սահմանել այն երկրներում, ուր իրենք գործում են: Արդյունքում ոչ միայն ավելի է դժվարացել թրաֆիկինգի դեպքերի բացահայտումը հետաքննություն կատարողների համար (ինչպես ասվում է՝ նրանք էլ ավելի խորը «ընդհատակ» են անցել), այլեւ կարծում ենք, որ այդ դեպքերն իսկապես նվազել են: Համեմայն դեպս, եւ Հայաստանի, եւ նպատակակետ երկրների իշխանություններն թրաֆիկինգի դեմ պայքարի ուղղությամբ ակնհայտ քայլեր են կատարում: Մինչդեռ հասարակական կարծիքն՝ իներցիայի ուժով, շարունակում է բավական անհանգստացած մնալ այս հարցով:

#### **ԳԼՈՒԽ 4. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ ապօրինի միգրացիայի եւ թրաֆիկինգի մասին հասարակության իրազեկվածությունը համեմատաբար աճել է: Միաժամանակ հայտնաբերեցինք, որ 2500 հարցվածներից 48-ը, այսինքն՝ 1.9%-ը, անձամբ եղել են այն իրավիճակներում, որոնք կարելի է որակել իբրեւ թրաֆիկինգ կամ աշխատանքային շահագործում: Համեմատելով այս տվյալները ընդհանուր բնակչության հետ՝ կարելի է եզրակացնել, որ մոտ 20 հազար մարդ (վերջին 10 տարիների ընթացքում) կարող էր հայտնված լինել համանման իրավիճակներում: Հնարավոր զոհերի այս թիվը պետք է լինի կառավարության եւ հասարակության ուշադրության կենտրոնում:

Իհարկե, մեծամասնությունն աշխատանքային շահագործման զոհեր են: Որպես կանոն, նրանք մեր հայրենակիցներն են, որոնք աշխատանք փնտրելու նպատակով Ռուսաստան են մեկնել, եւ այնտեղ, հանդիպելով անհաջողության, ենթարկվել են շահագործման, չարաշահումների կամ նույնիսկ հայտնվել են ստրուկի վիճակում: Սա մեկ այլ ապացույցն է այն փաստի, որ Հայաստանի կառավարությունը մինչ այսօր երկրից աշխատուժի օրինական արտագաղթի գործընթացը հեշտացնելու եւ վերահսկելու արդյունավետ քաղաքականություն չունի: Փաստորեն, Հայաստանի կառավարությունն ամբողջությամբ պատասխանատվություն չի կրում աշխատանք փնտրելու նպատակով արտասահման մեկնած ՀՀ քաղաքացիների իրավունքների համար: Կառավարական մարմինների ռազմավարական նպատակաուղղված գործողությունների պակասը կարելի է բացատրել վատ ղեկավարությամբ, արհեստավարժության անբավարար մակարդակով եւ պաշտոնյաների՝ այս խնդիրը լուծելու ցանկության բացակայությամբ:

Թրաֆիկինգի զոհերի որոշ մասը երիտասարդ կանայք են, որոնց հարկադրել են մարմնավաճառությամբ զբաղվել ՄԱԷ-ում, Թուրքիայում, Հունաստանում եւ այլ երկրներում: Այս մարդկանց մեծամասնությունը հեռանում է աշխատանք գտնելու հույսով, սակայն շատ հաճախ սեքս ինդուստրիա է ընդգրկվում, ուր թրաֆիկինգի զոհ դառնալու վտանգը շատ բարձր է:

132 անձանց հետ խորացված հարցազրույցները ցույց տվեցին, որ նրանց մեծամասնությունը թրաֆիկինգի զոհ է դարձել, քանի որ ապօրինի միջնորդների

հետ է շփման մեջ մտել: Այս դաշտը, որը կառավարության կողմից որեւէ կերպ չի վերահսկվում, ապօրինի գործունեությամբ զբաղվող մարդկանց համար եկամտաբեր ոլորտ է դառնում: Եւ արդյունքում, մեր հայրենակիցները, որոնք փորձում են աշխատանք գտնել արտասահմանում՝ առանց համապատասխան փաստաթղթեր եւ դրա համար օրինական իրավունքներ ունենալու, հաճախ աշխատանքային շահագործման եւ բռնի մարմնավաճառության են ենթարկվում, նրանց իրավունքները ոտնահարվում են, եւ երբեմն հայտնվում են ստրկական պայմաններում:

Հետազոտության անանունության մակարդակը թրաֆիկինգի զոհերի համար այն անհրաժեշտ վստահության մթնոլորտը չստեղծեց, որպեսզի նրանք բացահայտեն իշխանությունների այն ներկայացուցիչներին, որոնք ոչ պաշտոնապես ֆինանսավորում են մարդկանց ապօրինի միգրացիան: Բայց մենք ենթադրում ենք, որ առանց բարձրաստիճան «պաշտպանների» եւ շահագրգռված պաշտոնատար անձանց, մարդկանց միջազգային առելտուրը շատ ավելի դժվար կլիներ թե՛ Հայաստանում եւ թե՛ արտասահմանում:

Մարդկանց թրաֆիկինգի դեպքերը նվազեցնելու եւ խնդրի դեմ պայքարելու համար Հայաստանի կառավարությունը մայրաքաղաքում եւ հեռավոր շրջաններում պետական զբաղվածության գործակալության հովանու ներքո պետք է պաշտոնապես արտոնագրված գործակալությունների ցանց ստեղծի՝ բնակչությանը ծառայություններ մատուցելու եւ արտասահմանում աշխատանք գտնելու օրինական ուղիների մասին վստահելի տեղեկատվություն ապահովելու համար: Սա հնարավոր կդարձնի աշխատանք գտնելն ու անհրաժեշտ փաստաթղթերի ստորագրումը, որոնցում ֆիքսված կլինեն արտասահմանում կատարվելիք աշխատանքին վերաբերող որոշ հիմնական դրույթներ: Դա կարող է լինել ուղիներից մեկը, որի շնորհիվ կնվազեցվեն Հայաստանից ապօրինի միգրացիայի եւ թրաֆիկինգի ծավալները, մի երկրից, ուր աշխատուժի ավելցուկ եւ մեծ միգրացիոն հոսքեր գոյություն ունեն:

Եվ վերջապես, հետազոտությունը եւս մեկ անգամ հաստատում է, որ հայ բնակչությունը կարելորում է արտասահմանում աշխատանք գտնելու, աշխատանքային արտոնագրեր ստանալու եւ այլ հարցերի վերաբերյալ ավելի շատ եւ մանրամասն տեղեկատվություն ստանալու հարցը: Կառավարությունը չի պատասխանում հասարակական այս պահանջին, եւ մարդիկ ստիպված են դիմել

տարատեսակ ապօրինի միջնորդներին: Իբրեւ հասարակության իրազեկվածության բարձրացման առաջին քայլ առաջարկվում են. Հանրային հեռուստատեսությամբ (Հ1) եւ Հանրային ռադիոյով շաբաթական հաղորդումներ հեռարձակել, որոնց շնորհիվ մարդիկ կկարողանան ճշգրիտ տեղեկատվություն ստանալ աշխատանքային միգրացիայի հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է բարձրացնել աջակցող կազմակերպությունների մասին իրազեկվածությունն նրանց համար, ովքեր աշխատանք են փնտրում արտասահմանում:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԼՈՒԽ 1-ի ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ**

<b>Աղյուսակ 6. Ծագման վայրը</b>		
	<b>Քանակ</b>	<b>%</b>
Երեւան	673	26.9
Արագածոտն	110	4.4
Արարատ	178	7.1
Լոռի	222	8.9
Շիրակ	239	9.6
Վայոց Ձոր	59	2.4
Սյունիք	109	4.3
Գեղարքունիք	241	9.6
Կոտայք	216	8.6
Տավուշ	115	4.6
Արմավիր	207	8.2
Ղարաբաղ	17	0.7
Ուկրաինա	2	0.1
Մոլդովա	2	0.1
Վրաստան	24	1
Ադրբեջան	48	1.9
Ղազախստան	2	0.1
Ուզբեկստան	2	0.1
Ռուսաստան	6	0.2
Աբխազիա	1	0.04
Իրան	10	0.4
Հունաստան	1	0.04
Հնդկաստան	1	0.04
Թուրքիա	1	0.04
Լիբանան	1	0.04
Ջավախք	4	0.2
Սիրիա	9	0.4
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 7. Ներկայիս զբաղմունքը</b>		
	<b>Քանակ</b>	<b>%</b>
Կապույտ օձիքավոր աշխատող	358	14.4
Սպիտակ օձիքավոր աշխատող	294	11.8
Սեփական գործ/ բիզնես	126	5.0
Ֆերմեր/ գյուղացի	146	5.8
Տնային տնտեսուհի	501	20.0
Ուսանող	170	6.8
Շահադիտական նպատակ հետապնդող	3	0.1
Չի աշխատում	559	22.4
Թոշակառու	237	9.5
Դպրոցական	106	4.2
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 8. Ամուսնական կարգավիճակը</b>		
	<b>Քանակ</b>	<b>%</b>
Ամուրի	701	28.0
Ամուսնացած	1571	62.8
Ամուսնալուծված	87	3.6
Առանձնացած	20	0.8
Այրի	121	4.8
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 9. Միջին ամսական ընտանեկան եկամուտ</b>		
	<b>Քանակ</b>	<b>%</b>
Մինչև 5000 դրամ	103	4.1
5 001 – 10 000 դրամ	164	6.6
10 001 – 15 000 դրամ	224	9.0
15 001 – 30 000 դրամ	418	16.6
30 001 – 50 000 դրամ	549	22.0
50 001 – 100 000 դրամ	517	20.7
100 001 – 150 000 դրամ	143	5.7
150 001 – 200 000 դրամ	30	1.2
200 000 դրամ եւ ավելին	14	0.6
Զգիտեմ/ Դժվարանում են պատասխանել	338	13.5
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 10. Հարցվածներ, ովքեր եղել են արտասահմանում</b>		
	<b>Քանակ</b>	<b>%</b>
Հարցվածներ, ովքեր եղել են արտասահմանում	1043	41.7
Հարցվածներ, ովքեր չեն եղել արտասահմանում	1457	58.3
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 11. Արտասահման մեկնելու նպատակը</b>		
(Մեկից ավել պատասխան)	<b>Քանակ</b>	<b>%</b>
Սովորելու	35	3.4
Աշխատելու (թե օրինական, թե ապօրինի աշխատանք)	358	34.3
Զբոսաշրջության, հանգստի	439	42.1
Գործով (բիզնեսով)	170	16.3
Ամուսնության	18	1.7
Այնտեղ ապրելու	22	2.1
Բուժում ստանալու	6	0.6
Միջազգային երիտասարդական ճամբարի	1	0.1
Բարեկամներին այցելելու	7	0.7
Իմ երեխաներին այցելելու	5	0.5
Զինվորական ծառայության	8	0.8
Դպրոցական օլիմպիադայի մասնակցելու	1	0.1
1988 թվականի երկրաշարժից հետո տեղափոխման	2	0.2
<b>Ընդամենը</b>	<b>1072</b>	<b>102.9</b>



**Աղյուսակ 12. Դիրքորոշում Եվրոպայում, Ռուսաստանում եւ Մերձավոր Արեւելքի երկրներում աշխատելու նպատակով ՀՀ քաղաքացիների համար պաշտոնական թույլտվության նկատմամբ**

	Քանակ	%
Դրական	723	28.9
Բացասական	793	31.7
Չգիտեն	984	39.4
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

**Աղյուսակ 13. Տեղեկացվածություն աշխատանքային արտոնագիր ստանալու համար պահանջների մասին**

	Քանակ	%
Տեղյակ են	452	18.1
Տեղյակ չեն	2048	81.9
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

**Աղյուսակ 14. Արտասահման մեկնելու ուղիներ**

	Քանակ	%
Միայն օրինական	246	9.8
Եւ օրինական, եւ ապօրինի	1856	74.2
Միայն ապօրինի	108	4.4
Չգիտեն	290	11.6
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

**Աղյուսակ 15. Արտասահմանում աշխատած որեւէ մեկին ծանոթ լինելը**

	Քանակ	%
Տեղյակություն	856	34.2
Անտեղյակություն	1644	65.8
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

**Աղյուսակ 16. Արտասահմանում աշխատող անձանց առջեւ ծառայած խնդիրների տեսակները**

	Քանակ	%
Նրանցից պահանջվում էր աշխատել արտաժամյա	213	24.9
Նրանց ցածր էին վճարում	325	38.0
Նրանք գործատուի կողմից շահագործման էին	146	17.1
Անձնագրերն առգրավվում էին	79	9.2
Տեղաշարժը սահմանափակ էր	181	21.1
Ֆիզիկական եւ հոգեբանական ճնշում	67	7.8
Գրանցման եւ քաղաքացիության հետ կապված	12	1.4
Սոցիալական հարցեր	1	0.1
Արտաքսում	4	0.5
Ստիպված էին թաքնված ապրել	1	0.1
Ապրանքի բռնագրավում	1	0.1
Ազգային խտրականություն	1	0.1
Ֆինանսական խնդիրներ	2	0.2
Ընդհանրապես ոչ մի խնդիր	164	19.2

Չգիտեն 96 11.1

<b>Աղյուսակ 16. Արտասահմանում աշխատող անձանց առջև ծառայած խնդիրների տեսակները</b>		
	<b>Քանակ</b>	<b>%</b>
<b>Ընդամենը</b>	<b>1293</b>	<b>150.9</b>

<b>Աղյուսակ 17. Երկրներ, ուր հիմնականում տեղի է ունենում միգրանտների շահագործում</b>		
<b>(տեղյակ լինելու դեպքում)</b>	<b>Քանակ</b>	<b>%</b>
ԱՄՆ	98	16.1
Եվրոպական երկրներ	30	5.1
Ավստրիա	3	0.5
Բելգիա	21	3.5
Չեխիա	5	0.8
Դանիա	6	1.0
Անգլիա	4	0.7
Ֆրանսիա	19	3.1
Գերմանիա	70	11.5
Հունաստան	43	7.1
Հոլանդիա	39	6.4
Լեհաստան	48	7.9
Ռումինիա	3	0.5
Իսպանիա	16	2.6
Շվեդիա	6	1.0
Շվեյցարիա	4	0.7
Նոր անկախ պետություններ (ՆԱՊ)	3	0.5
Ղազախստան	3	0.5
Ռուսաստան	321	52.9
Տաջիկստան	3	0.5
Թուրքմենստան	2	0.3
Ուկրաինա	20	3.3
Ուզբեկստան	3	0.5
Թուրքիա	99	16.3
Ասիական երկրներ	5	0.9
Արաբական էմիրություններ	8	1.3
Իրան	6	1.0
Սիրիա	3	0.5
Արգենտինա	1	0.2
Կանադա	1	0.2
Մեքսիկա	1	0.2
Չգիտեմ	48	7.9
<b>Ընդամենը</b>	<b>942</b>	<b>155.5</b>

<b>Աղյուսակ 18. Տեղյակություն ՉՀ անհատ քաղաքացիների վերաբերյալ, ովքեր գաղթել են Հայաստանից եւ ստիպված են եղել աշխատել սեքս ինդուստրիայում</b>		
	<b>Քանակ</b>	<b>%</b>
Տեղյակություն	1544	61.8
Անտեղյակություն	956	38.2
<b>Ընդամենը</b>	<b>2500</b>	<b>100.0</b>

<b>Աղյուսակ 19. Երկրներ, ուր հիմնականում սեքս ինդուստրիայում աշխատելու նպատակով է արտագաղթ տեղի ունենում (տեղյակության դեպքում) (բազմակող)</b>		
	<b>Քանակ</b>	<b>%</b>
ԱՄՆ	71	4.6
Եվրոպական երկրներ	31	2.0
Բելգիա	8	0.5
Բուլղարիա	3	0.2
Չեխիա	7	0.5
Ֆրանսիա	8	0.5
Գերմանիա	21	1.4
Հունաստան	47	3.0
Հոլանդիա	10	0.6
Լեհաստան	42	2.7
Ռումինիա	3	0.2
Իսպանիա	13	0.8
Նոր անկախ պետություններ	13	0.8
Ռուսաստան	237	15.3
Տաջիկստան	8	0.5
Ուկրաինա	7	0.5
Թուրքիա	899	58.2
Միացյալ Արաբական Էմիրություններ (ՄԱԷ)	339	22.0
Ասիական (արաբական մահմեդական) երկրներ	63	4.1
Սիրիա	77	5.0
Լիբանան	7	0.5
Եգիպտոս	5	0.3
Իրան	80	5.2
Չինաստան	3	0.2
Չգիտեմ	281	18.2
<b>Ընդամենը</b>	<b>2283</b>	<b>147,8</b>

**Աղյուսակ 20. Տեղակություն աշխատանքային շահագործման իրավիճակներում հայտնված որեւէ մեկի մասին**

Այսպիսի իրավիճակների հաճախականությունը/ ոչ հաճախականությունը	Աշխատանք՝ ճամփորդության պարտքը մարելու համար (կամ աշխատանք առանց վարձատրության, քանի որ անձնագիրը բռնագրավվել էր գործատուի կողմից)		ՀՀ են վերադարձել առանց դրամի, որովհետեւ գործատուն չի վճարել կամ ցածր աշխատավարձ է վճարել		Մեկնել է արտասահման աշխատելու նպատակով եւ ժամանելուն պես իմացել, որ աշխատանքի պայմանները տարբերվում են պայմանավորված ից	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Հաճախ	501	23.4	711	33.2	630	29.4
